

## Լուս Անճելլուսի Քաղաքապետական Խորհուրդը ճանչցավ Ղարաբաղի Անկախությունը

Միացեալ Նահանգներու ամենամեծ քաղաքներէն մէկը, հայաշատ Լուս Անճելլուսի Քաղաքապետական Խորհուրդը միաձայնութեամբ վաւերացուց բանաձեւ մը՝ ճանչնալով Լեռնային Ղարաբաղը որպէս անկախ եւ ինքնիշխան պետութիւն:

Բանաձեւը նաեւ կոչ կ'ընէ միջազգային հանրութեան ըստ արժանուր ճանչնալ «Արցախի Հանրապետութիւնը որպէս ազատ, անկախ եւ ինքնիշխան պետութիւն»:

Խորհուրդի բանաձեւը կը յայտնէ, որ Լեռնային Ղարաբաղը իր անկախութեան աւելի քան երկու տասնամեակներու ընթացքի ձգտած է փոփոխութիւն եւ կայունութիւն բերել Կովկասի տարածաշրջանին, կազմակերպած է ազատ եւ արդար ընտրութիւններ ու հանրաքուէներ, որոնք լայնօրէն հռչակուած են օրինակելի տարածաշրջանին համար:

Բանաձեւը կ'անդրադառնայ նաեւ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման համար մղուած պայքարին:

Բանաձեւը ներկայացուցած է Լուս Անճելլուսի Քաղաքապետական Խորհուրդի հայազգի անդամ Փոլ Գրիգորեան:

Այսպիսով Լուս Անճելլուս կուզայ միանալու ամերիկեան Ռոտ Այլընտ, Մասաչուսեթս, Մէյն, Լուիզիանա, Մերիլենտ նահանգներուն եւ Ֆրեզնո քաղաքին, որոնք նմանօրինակ բանաձեւերով ճանչցած են Արցախի անկախութիւնը:

## Հայ-Ատրպէյճանական Սահմանը Կը Շարունակէ Մնալ Անհանգիստ

Ատրպէյճանական զօրքերուն կողմը Հայաստանի սահմանը անցնելու փորձերը կը շարունակուին առիթ տալով ամէնօրեայ բախումներու:

Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութեան պաշտօնական տեղեկատուութեան համաձայն, 20-ամեայ զինծառայող Կարէն Գալստեան սպաննուած է Յունուար 28-ին, Հայոց բանակի 22-րդ տարեդարձի օրը, ատրպէյճանական զինուորական կրակոցով: Երիտասարդը մահացու հարուած ստացած է գլուխէն:

Դէպքը տեղի տեղի ունեցած է Մարտակերտի տեղամասի մարտական դիրքերէն մէկուն վրայ:

Հայաստանի մէկ այլ քաղաքացի՝ 77-ամեայ Մամիկոն Խոջոյեան գերի ինկած է Ատրպէյճանական կողմը:

## «Պատմական Իրադարձութիւններու Քողագերծումը Ցաւոտ Գործընթաց Է, Բայց Պէտք Է Կատարուի», - Անգարայի Սէջ Յայտարարեց Ֆրանսայի Նախագահը

Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի Անգարա կատարած պետական այցելութեան եւ Թուրքիոյ նախագահ Ապտուլա Կիլլի հետ տեղի ունեցած բանակցութիւններու ընթացքին, Հայոց Յեղասպանութիւնն ու անոր միջազգային ճանաչումը դարձան օրակարգի գլխաւոր նօրակարգերէն մէկը:

Մի քանի ժամ տեւած առանձնազրոյցի աւարտին տեղի ունեցած միատեղն մամլոյ ասուլիսի ժամանակ նախագահ Օլանտ յայտարարեց. «Պատմական իրադարձութիւններու քողագերծումը ցաւոտ ն գործընթաց է, բայց այդ պէտք է կատարուի»: Ֆրանսայի նախագահի համոզմամբ՝ առերեսումը սեփական պատմութեան հետ ի վերջոյ կը նպաստէ ժողովուրդներու հաշտեցման:

Ասուլիսի ընթացքին Օլանտ չըջանցեց նաեւ Ֆրանսացի օրէնսդիրներու կողմէ Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրէականացնող նոր օրինագծի հաստատման հաւանականութիւնը: Ֆրանսուա Օլանտ չյայտնեց, թէ Ֆրանսական կառավարութիւնը ինչպէս կ'արձագանքէ այդ նախաձեռնութեան եւ բաւարարուեցաւ ըսելով. «Յեղասպանութեան քրէականացման հարցի վերաբերեալ կրնամ ըսել, որ մենք կը դիմենք ճիշդ քայլի՝ հետեւելով օրէնքի պահանջին»:

## «Հայաստան» Հիմնադրամը Նոր Գումարներ Հանգանակած Է Սուրիահայերուն Օգնելու Համար

Սուրիահայութեան աջակցութեան ծիրէն ներս նոր տարուայ ընթացքին յաւելեալ գումարներ փոխանցուած են «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը կը տեղեկացնէ, որ հիմնադրամի Ֆրանսայի տեղական Մարմինը հանգանակած է 100,000 Եւրօ:

Գերմանիոյ տեղական մարմինի հանգանակած 35,000 Եւրոն արդէն իսկ փոխանցուած է Սուրիահայութեան շտապ օգնութեան եւ վերականգնման մարմինին, իրենց հայեցողութեամբ ոգտագործելու նպատակով:

«Թեյեթոն 2013»-ի ընթացքին հաւաքուած գումարներէն 15 միլիոն Դրամ ալ կը յատկացուի Հայաստանի մէջ բնակող սուրիահայ ընտանիքներու տարբեր տեսակի կարիքներուն՝ ներառեալ ուսանողներու ուսման վարձի, վերահատուցութիւններու եւ յուղարկաւորութեան ծախսերու փոխհատուցման, որոնք արդէն իսկ ընթացքի մէջ են:



Ֆրանսայի եւ Թուրքիոյ նախագահները մամլոյ ասուլիսի ընթացքին

Մեր նպատակը ճշմարտութեան հասնիլն է, եւ մենք կը փափաքինք, որ բոլորը ըմբռնեն այդ փաստը»:

Նոյն ասուլիսի ընթացքին Թուրքիոյ նախագահ Ապտուլա Կիլլ իր կարգին խօսելով նոյն հարցի շուրջ գլխաւորաբար շեշտը դրաւ եւրոպական դատական ու պետական ատենաներու որոշումներուն վրայ:

Կիլլ մասնաւորաբար Յիշեցուց Յեղասպանութեան ժխտումը քրէականացնելու առաջին փորձը կասեցուցած Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդի որոշումը, ինչպէս նաեւ Մարդու Իրաւունք-

ներու եւրոպական Դատարանի որոշումը, որով չեղեալ յայտարարուեցաւ Թուրքիոյ Բանուորական կուսակցութեան դեկավար Տողու Պերինչէքի դէմ Լոզանի դատարանին կողմէն կայացուած վերջին վճիռը:

«Ֆրանսայի նախագահի հետ դէմ առ դէմ զրոյցի ժամանակ մենք այս հարցը շատ անկեղծ մթնոլորտի մէջ քննարկած ենք: Ընդգծեցինք, որ 1915 թուականի իրադարձութիւններու քննութեան պէտք է ներգրաւուին պատմաբաններն ու

Շարք էջ 4

## «Արարատ 2013 Երագ-Խոււմբ»ի Արարատի Գագաթի Նուաճումը «Իրենց ցուցադրած տեսանկյանի առթիւ»



Նոր Սերունդ Մշակութային Միութեան անդամներն ու համակրական լայն շրջանակը ամիսներէ ի վեր անհամբեր կը սպասէին այն տեսանկյանին կամ վաւերագրական ֆիլմին, որ կը պատկերէր վարչութեան ատենապետ՝ Յարութ Տէր Դաւիթեանի առաջնորդած «Արարատ 2013

Երագ-Խոււմբ»ի ուղեւորութիւնը դէպի Արեւմտեան Հայաստան: Արդարեւ ան, անցեալ Յուլիսի աւարտին, 13 հոգինոց լեռնագնացներու խումբ մը գլխաւորելով կրցաւ հասնիլ մինչեւ Արարատի գագաթը:

Շարք էջ 5







**ՏԵՍԱԿԵՏ  
ԼԻԲԱՆԱՆԻ ՅԱՏՈՒԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏԵԱՆԻ  
ԳՆԱՑՔԸ ԵՒ ԿԱՍ ՐԱՖԻՔ ԶԱՐԻՐԻԻ  
ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

**ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԹԵԱՆ**

Լիբանանի Յատուկ Միջազգային Ատենանը սկսաւ իր գործին անցեալ շաբաթ Լահէյի մէջ, Բաֆիք Հարիւրիի ահաբեկչական սպանութեանն ինը տարի ետք:

Ամբաստանեալները, թիւով հինգ, բոլորն ալ Հրգայլալայի մարդիկ, կը դատուին ի բացակայութիւն (in absentia): Դատարանին կողմէ նշանակուած անոնց պաշտպան փաստաբաններու խումբին թիւը հարիւրը կ'անցնի:

Հրգայլալայի պետ Սայէտ Նասրալլան նախապէս յայտարարած էր, որ անոնց ձեռքադրութիւնն ու յանձնումը տեղի պիտի չունենայ ո՛չ երեք ամիսէն, ո՛չ երեք տարիէն եւ ո՛չ ալ երեք հարիւր տարիէն...:

Տրուած ըլլալով որ Լիբանանի մէջ հակառակորդ կողմերը (Մարտ 8-ի եւ Մարտ 14-ի) Բաֆիք Հարիւրիի սպանութեանն աս֊իս տուր պայքար կը մղեն մէկ կողմէ քողագերծելու եւ միւս կողմէ քողարկելու ահաբեկող եւ սպանող կողմը, միջազգային ատենանի նիստերը եւ անոնց ընթացքին ներկայացուած փաստերն ու փաստաթուղթերը մեծ շահագրգռութիւն պիտի ստեղծեն անկասկած:

Հրգայլալան եւ իր դաշնակիցները, որոնց մէջ՝ Պաշար Ասատի Սուրիան, միջազգային ատենանը կը մեղադրեն որպէս Արեւմուտքի կամ Ամերիկայի եւ Իսրայէլի վարձկան, եւ զայն կը կոչեն « քաղաքականացած » (politicized) ու կողմնակալ, եւ ի սկզբանէ, առանց լսելու կամ կարեւորելու տրուելիք կամ ներկայացուելիք փաստաթուղթերնները, որոնք զիտական ամենաբարձր աստիճանի ճարտարութեամբ հաւաքուած եւ ստացուած ըլլալու կերպարը ցոյց կու տան, վճռած են չընդունիլ ի սկզբանէ միջազգային ատենանի որոշումը:

Անդին, Հարիւրիի ընտանիքը եւ անոր հետ ընտանիքները բոլոր անոնց, որոնք ահաբեկչութեամբ նահատակուեցան Լիբանանի մէջ 1977 թուականէն ի վեր, սկսեալ Քամալ Ժուսայլաթէն, անցնելով Ֆահալ Ժուսայլաթէն, անցնելով Ֆահալ Մուաւաքէն, Մուսթաֆա Լաուզիի եւ Բիաս Թահապի, Մուֆթի Հասան Խալէտի եւ տասնեակ ու տասնեակ քաղաքական, զրական եւ զինուորական ականաւոր գործիչներուն, իչպիսիք էին Սամիր Քասիրը, Ժորժ Հաուին, Ժուպրան Թուէյնին, Փիէր Ամին Ժրմայէլը, Ուսամ Իտը, Ուսամ Հասանը եւ շատ ուրիշներ, յուսալից կը հետեւին ատենանի նիստերուն, լսելու համար վկայութիւններ եւ փաստաթուղթեր, որոնք երբեք կարելի չէր լսել կամ տեսնել զօրաւորին ծառայող կամ անկէ վախցող Լիբանանի « քաղաքականացած » ատենաններուն առջեւ, որոնք կատարուած ահաբեկչութիւններէն որեւէ մէկը դատապարտել չէին կրցած:

**Գուցէ դատապարտեալները**  
  
**Ձեռք Ծանուցումները  
Վստահեցե՛ք  
«Մասիս»  
Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680  
F: (626) 797-6863

անպարտ նկատուին յետ դատապարտութեան, որ կրնայ քանի մը տարի տեւել, բաւարար կամ կասկածէ հեռու (beyond reasonable doubt) փաստերու չգոյութեան պատճառաւ, ինչ որ պատահեցաւ Օ. Ջ. Տիմփսոնի պարագային, 1995 թուականին, երբ ան թեքնիք պատճառներով անպարտ արձակուեցաւ, հակառակ ամէնքին կողմէ անոր մեղաւոր ըլլալը գիտցուած ըլլալուն: Երկու շաբաթ առաջ, Մ. Ծննդեան տօնին առթիւ տուած իր քարոզին մէջ, որ OTV լիբանանեան հեռատեսիլէն ցոյց տրուեցաւ, Անթիլիասի Արամ Ա. Կաթողիկոսը ձեռով մը ճիշդ դիրքորոշուեցաւ որպէս Լիբանանի հայ համայնքի ներկայացուցիչը, երբ ըսաւ որ թէեւ հայ համայնքի ներկայացուցիչները երկու հակադիր կողմերուն դաշնակից են, սակայն եւ այնպէս անոնք մէկ են իրենց համայնքի ազգային շահերու հետապնդման մէջ, հետեւաբար տուաւ այն տպաւորութիւնը, թէ հայ համայնքը չէզոք դիրք ունի կողմերու այդ սուր հակամարտութեան մէջ:

Ուրեմն որպէս հայ դիտորդ, նախկին լիբանանահայ դիտորդ, որ հեռուէն դիտելով եւ վախէն լուրջ չպարտադրուելու վիճակի մէջ ըլլալով, առանց դիրք բռնելու կողմերուն միջեւ, ինքզինքին կը ներեմ հարց տալ ու խորհիլ որպէս արդարասէր մարդ, թէ ինչո՞ւ բոլոր ահաբեկուած նահատակները միշտ Սուրիոյ ներկայ վարչակարգին դէմ խօսողները կամ գործողները եղած են Լիբանանի մէջ: Ինչո՞ւ արդեօք Սուրիոյ գորաւոր մարդը Լիբանանի մէջ՝ Ղազի Քանանը, Հարիւրիի ահաբեկումէն եւ սուրիական ուժերու Լիբանանէն դուրս ելլելէն ետք, անձնապան ըլլալու ենթակուեցաւ...:

Ինչո՞ւ ինքզինք անմեղ նկատող միջազգային ատենանի առջեւ իր անմեղութիւնը փաստելու առիթը չ'օգտագործե՞ր եւ իր բարեկամ ու դաշնակից երկիրներու անսահման կարելիութիւններով գինուած՝ ինքզինք չի պաշտպանե՞ր: Վերջապէս, ինչո՞ւ Իսրայէլի դէմ պատուաբեր դիմադրութիւն տանող եւ անվախ ազատամարտիկ պատրաստող ուժը Լիբանանի, պիտի ծառայէ Իսրայէլի ճակատէն հեռու մղուող կռիւներու մէջ ի վնաս Լիբանանի ազգային համերաշխ կեանքին եւ ի վտանգ անոր ազատ ապրելու իրաւունք շնորհող վարչաձեւին:

**«Արարատ 2013 Երագ-Խումբ»-ի  
Արարատի Գագաթի Նուաճումը**

**Շարունակուած էջ 1-էն**

Սոյն վաւերագրական տեսաժապաւէնի ցուցադրութիւնը տեղի ունեցաւ Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, Ուրբաթ 24 Յունուար 2014, երեկոյեան ժամը 8ին, շուրջ 250 հոգիներու ներկայութեան:

«Արարատ Երագխումբ 2013» կոչուող լեռնագնացներու խումբը կը բաղկանար 13 հոգիներէ. Անդրանիկ Պողոսեան եւ իր երեք հօրեղայրներուն թոռները՝ Անի եւ Ռոպերթ Պողոսեան, Ներսէս Պողոսեան, Էմիլիա Պողոսեան, հայր եւ որդի Աշոտ եւ Հայկ Մանուկեան, հայր եւ որդի Յարութ եւ Ռազմիկ Տէր Դաւիթեան, ամուսիններ Գէորգ եւ Անի Իսկէնտէրեան, Հրաչ Լուքսեան եւ Հրաչ Ծահպագեան:

ԱՄՆ-ի, Եւրոպայի եւ Հայաստանի տարբեր շրջաններէ ժամանած 13 լեռնագնացները ժամադրուած ըլլալով Երեւան, հոնկէ ճամբայ կ'ելլեն դէպի Վրաստան քանի որ Հայաստան-Թուրքիա սահմանը փակ է: Վրաստանի մէջ անոնք կ'այցելեն Նինոցմիտա աւանին մէջ գտնուող բանաստեղծ Վահան Տէրեանի տուն թանգարանը, ինչպէս նաեւ կը դիտեն պատմական Թմկաբերդի աւերակները:

Ախալցխա քաղաքին մէջ գիշերելէ ետք յաջորդ առաւօտ խումբը կ'ուղեւորուի դէպի Կարս Բռնագրաւուած այս քաղաքին մէջ ցաւով կը դիտեն տխրահուշակ բերդը, որ առանց փամփուշտ մը արձակելու յանձնուեցաւ թշնամիին ու ծանր զգացումներով կը հեռանան այս երբեմնի մայրաքաղաքէն: Ապա կ'այցելեն ուրիշ հին մայրաքաղաք մը՝ Անի աւերակները, որ նշանաւոր եղած է իր հազար ու մէկ եկեղեցիներով: Հոչակաւոր մայր տաճարն ու Ապուղամբենց Ս. Գրիգոր Եկեղեցին դիտելով կը հիանաս մեր դարաւոր մայրաքաղաքի ճարտարապետական գլուխ գործոց կոթողներով:

Նոյն օրը արշաւախումբը կ'իջեւանի Տօղուպայագիղ թրքական քաղաքը, որն Արարատէն 80 քիլոմետր հեռու կը գտնուի:

Նախապէս եղած պայմանաւորուածութեան համաձայն յաջորդ առաւօտ լեռնագնացներու խումբը ուղեկցութեամբ տեղաբնակ Մէթին Էմլաքի խումբին, ճամբայ կ'ելլէ դէպի Արարատ, որուն բարձրութիւնն է 5165 մետր: Տարբեր տարիքի ուղեւորները (18-67 տարեկան) կը սկսին բարձրանալ Մասիս սարի լանջերով դէպի «Երագ» կատարը: 3200 մետր բարձրութեան հասնելէ

ետք՝ այստեղ իրենց վրանները կը լարեն եւ կը հանգչին որպէս առաջին հանգրուան: Յաջորդ առաւօտ, հաւաքելէ ետք իրենց վրանները, կը շարունակեն իրենց մագլցումը մինչեւ 4200 մետր, ուր դարձեալ կը լարեն վրանները, հանգստանալու համար մինչեւ կէս գիշեր: Կէս գիշերէն ժամ մը անց, ուղեւորները իրենց մեծ մարտահրաւէրին կը սկսին քարացած ձիւնակոյտերու վրայով, գաւազաններով երթը որպէս «Անհաս փառքի ճամբայ» եւ վերջապէս ժամը 6:45ին կը հասնին կատար Արարատին...: Այդ հոյակապ տեսարանին առջեւ կենաց խմելով երգեցին «Ես իմ Մասիս սարն եմ սիրում»: Այստեղ ուխտի եկածները սպիտակ ձիւնի տակ գետեղեցին յուշանկարներ եւ պարզեցին յաղթական դրօշները ՆՍՄՄ-ի, ՍԳ-ՀԿ-ի, ՀՄՄ-ի, Ոսկրածուծի ընկերակցութեան, Հայաստանի եւ այլ շրջաններու...: Արարատը նուաճուած էր... Կեցցէ Արարատը: Այս առթիւ կը լիչենք երգիչին «Հիմա հասկանում եմ, թէ դուն ինչ ես հայոց համար»: Վայրէջքի ճամբուն վրայ, սարալանջի գոյնգոյն ծաղիկներու հիասքանչ նկարները հմայել էին:

Լեռնագնացներու ինը օրուան շրջապտոյտի վերջին հանգրուանն էր վան քաղաքն ու վանայ լիճը իր Ախիթամար կղզիով, հոյակապ մայր տաճարով ու յարակից այլ հնութիւններով: Շատ բան կարելի է խօսիլ վանի մասին: Վանի հայութեան եւ անոր մղած ինքնապաշտպանութեան հերոսական կռիւները հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի ամենափայլուն էջերէն մին կը կարգեն:

Սոյն տեսանիկը կը վերջանայ մասնակից 13 լեռնագնացներու յաղթական շուրջապարով մը, մաղթելով որ այդ շուրջապարն ըլլայ համատարած մեր ազատագրուած հողերուն վրայ...:

Պատմա-գեղարուեստական հետաքրքրական տեսանիկ մըն էր ընդելուզուած համապատասխան երգերով, երաժշտութեամբ եւ ասմունքով, որոնց մեկնաբանողն էր նոյնինքն՝ Յարութ Տէր Դաւիթեանը:

Այդ օրը բոլոր ներկաները մեր պատմական վայրերն այցելեցին եւ Արարատ լեռ բարձրացան, խոստանալով՝ օր մը այցելել ազատագրուած Մասիս սարը:

Ներկաները սրահէն բաժնուեցան հոգեկան մեծ գոհունակութեամբ:

Գ. Մ.

**INNOVATIVE Designs Manufacturing, Inc.**

idmifurnishings.com

### ՋԵՆԲԻՂ ՄԱՏԱՂ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԻՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

#### ԱԻՆՏԻՍՏԱՋՄԻԿ

Մեր պատմութիւնը կը յուշէ, որ ռազմարուեստին հանդէպ մեր անտարբեր կեցուածքը շատ թանկ արժած է մեր ողբերգական ճակատագիրին վրայ:

Եթէ խաչին չափ սիրէինք թուրը, Աստուծոյ ուղղեալ աղօթքներուն չափ փառաբանէինք գէնքն ու գրահը, եթէ բերդերու եւ ամրոցներու թիւը գերազանցէր վանքերու եւ մատուռներու թիւին, եւ եթէ շարականներու գուգահեռ երգէինք ռազմաշունչ քայլերգներ եւ ոգեւորուէինք մարտական յաղթերգներով, բացառուած չէր որ ցանկացած ոսոխ դուրս պիտի չպրտուէր Հայաստանի բարձրաբերձ սարերէն ու անդնդախոր կիրճերէն: Աւելին, ցաքուցրիւ փոքրաթիւ ուժերը եթէ համախմբուէին մէկ հրահանգի ու դրօշի ներքեւ, անկազմակերպ եւ ինքնագլուխ շոկատներու փոխան ունենալինք միացեալ բազուկ եւ հրամանատար, գինուորական կարգապահութիւնն ու հաւատարմութիւնը ըլլար համընդհանուր եւ խիստ բոլորին համար, կեդրոնախոյոյ ոգին ի տարբերութիւն դրսեւորէինք կեդրոնաձիգ միտում, ապա տարբեր ընթացք եւ ուղղութիւն պիտի ունենար մեր պատմութեան հոլոփոյթը:

Շատ խօսած ու գրած ենք մեր հարուստ մշակութային ժառանգութեան եւ արուեստներուն մասին, արդար հպարտութեան գործօններ են անոնք անտարակոյս, ասպարէզ կրնան կարգալ միջագոյն բեմերու եւ հրապարակներու վրայ. յարգանք պարտադրող հոգեմտաւոր արժէքներ ունեցած ենք եւ ունինք: Սակայն, ռազմարուեստն ու գէնքի եւ մարտի գիտութիւնը միթէ՞ նոյնպէս կատարելութեան ձգտող եւ անհրաժեշտ ազդակներ չեն գոյատեւելու, հպարտանալու եւ իւրացնելու համար: Ինչ փոյթ ճարտարապետական յուշարձաններն ու հայրենիքի սահմանները, մշակութային եւ արուեստի կոթողները, երբ գանոնք պահպանող, պաշտպանող եւ գուրգուրացող հրացան չկայ, երբ գանձը եւ արժանապատուութիւնդ անվտանգ մնալու երաշխիք չկայ՝ բազմագոյն եւ բազմատեսակ հորդաներու եւ բարբարոսներու դիմաց:

Այսօր հայոց ազգային բանակին օրն է. Հայաստանի գինուած ուժերուն օրն է:

Հայաստանի աշխարհագրական դիրքը, թշնամի հարեւաններու



րով շրջապատուած ըլլալու ոչ ցանկալի հանգամանքը, հայոց ոչ բարձր թուաքանակը կը պարտաւորեցնեն ունենալու պինդ եւ մարտունակ բանակ մը: Արդարեւ, Հայաստանի երրորդ հանրապետութեան կենսագրութիւնը սկսաւ պատերազմի դաշտէն: 1988-1994 թուականներու դարաբաղեան հարկադիր պատերազմը առաջին եւ լուրջ փորձաքննութիւնը հանդիսացաւ հայ ռազմական ուժին: Հայաստանի անկախութեան նախաքայլերը ընթացան պատերազմի ահեղ բովով. հայ կամաւորն ու ազատամարտիկը, ապա հայոց կանտնաւոր բանակը թրծուեցան ռազմադաշտի քուրային մէջ: Եւ ինչ հրաշք, այս անգամ հայը պատուով իր հրացանը դրաւ պատեան: Հայ ռազմիկը ազատագրելէ յետոյ բռնախլեալ Արցախն ու յարակից գրաւեալ շրջանները, անփառունակ խլեակներու նման դէն շարտեց նախադարձակ եւ զաւթիչ թշնամին: Մեր պատմութեան հոլոփոյթին, եթէ ամէն գօտեմարտէ ետք կորսնցուցինք տարածքներ, աստիճանաբար փոքրացաւ հողը հայրենի, ապա այս քննութեան պատահեցաւ հակառակը. այս անգամ շրջուած էր պատմութեան անցեալի դառն թաւալը: Հայ գինուորը իր հրացանով հաստատեց Հայաստանի արեւելեան սահմաններուն խրամատները: Իր արեւմտեայ գծագրեց իր երկրին նորագոյն քարտէզը: Փա՛ռք անձանօթ հայ գինուորի հրացանին ու... շիրիմին:

Հայաստանի նորակազմ բանակին ծնունդն ու փառապանծ յաղթանակը սխալ դիպուածի արդիւնք մը չէր. նոյնիսկ կազմակերպուած գործողութիւններու հե-

տեւանք չէր. այլ՝ ոգիի մը նուաճումն էր ան: Ինքնաբուխ կամաւորներ, ինքնաշէն հրացաններով գինուած նուիրեալներ, ազգային ոգիով գրահուած ազատամարտիկներ, պատմական եւ դիւցազնական աւանդոյթներով կոփուած ուխտեալներ եւ ինքնամոռաց երդուեալներ ուղղուեցան հոն՝ ուր պայքարը պահանջեց, նահատակութեան գիտակցութիւնը ուղղորդեց եւ ազատ ու անկախ հայրենիքի գաղափարականը ոգեշնչեց: Անոնցմէ շատեր նմանակելով հայ ազատագրական շարժման ֆետայիներուն տիպարները, այդ ջոկատներէն շատեր կրելով հայրուկային շարժման հերոսներու անունները, խումբեր եւ միաւորներ ստանձնելով հայ ազատամարտի ռազմիկներուն ծածկանուններն ու օրինակները, անոնց սաւառնող ոգիով ու ճախրող արծիւներու ազատատենչ խանդով ու եռանդով մարտի դաշտին վրայ կերտեցին անօրինակ սիրանքներ, գերմարդկային ու վեհ խոյանքներ. կատարեցին թշնամին սաստող եւ հայուն դաստիարակիչ հատուկ հարուածներ: Կասկածէ վեր է, որ արցախեան յաղթանակին իրենց բարոյական եւ անտեսանելի ներդրումը ունեցան օսմանեան բռնատիրութեան դէմ ծառայած հայ յեղափոխականները, անոնցմէ ժառանգուած օրինակելի վարքականոնը, յորդորներն ու մարտական հրահանգները: Երէկ հնչակեաններն էին իրենց մոսին հրացանով Սասունի, Ջէյթունի եւ Հաճնոյ ծերպերուն կառչած եւ կածաններուն ծուրած. դաշնակցականներն էին իրենց մարթիւնով ու ետրի փոխան գէնք շարկած՝ Խանասորէն մինչեւ Տարօն ու Պանք Օթոման. հայկա-

կան կամաւորական ջոկատներն էին Անդրանիկի, Դրոյի, Քեռիի, Աւշարեանի եւ Հայկ Բժշկեանի հրամանատարութեամբ. ԱՍԱԼԱ-ի տղաքն էին Փարիզի, Անգարայի թէ իսթանպուլի մէջ: Իսկ անոնց ցանած սերմերէն ծլած, ուռճացած եւ պողպատացած հայ ազատամարտիկները Արցախի թէ Հայաստանի սահմաններն էին հայ ժողովուրդի նորագոյն յաղթանակը կերտելու տրամադրուած: Այստեղ տխուր մտորում մը կը տանջէ գիտ:

Վերջերս, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Լեհաստան այցելեց. ան բնականաբար անդրադարձաւ հայ-լեհական կապերուն եւ լեհահայ զաղութի պատմական հարուստ անցեալին: Ան ընդգծելու համար հայութեան նպաստը Լեհաստանի պատմութեան մէջ եւ ճակատագիրին վրայ, շեշտեց հայ գորականներու եւ ռազմիկներու մասնակցութիւնը Լեհաստանի ազատագրութեան եւ օսմանեան ուժերու դէմ մարտնչումներու ընթացքին: Ներքին ընդվզում մը ունեցայ, թէ ինչո՞ւ հայը իր հայրենիքի ազատագրութեան եւ իր ժողովուրդի փրկութեան գոհուելու փոխան՝ իր ծառայութիւնները մատուցած է այլոց: Եւ օրինակները շատ. Բիւզանդական Կայսրութիւնը լաւապէս կ'օգտուէր հայոց գինուածէն, նոյնիսկ Կիպրոս հաստատուած առաջին հայերը եղած են գինուորներ՝ պաշտպանելու կղզին՝ յանուն բիւզանդական շահերուն: Միջին դարերուն՝ արաբները վարուեցան նոյնպէս, ապա՝ Օսմանեան Կայսրութիւն, ցարական Ռուսաստան, հունգարական բանակէն մինչեւ 20-րդ դարուն Պուլկարիա, ապա՝ Ֆրանսա, ԱՄՆ, Յունաստան, Սուրիա, Լիբանան, Իրաք ու Իրան, Թուրքիա եւ այլն, հայ գինուորը եղած է պահապանն ու պաշտպանը օտարներու: Դեռ վերջերս, Աֆղանիստանի մէջ սպաննուեցաւ ամերիկեան բանակի ծովային զնդապետ Մաթիու Մանուկեանը: Ինչ ափսոսալի փաստ, քաղաքացիական պարտաւորութեան բերումով կրես ոչ հարազատ գինուորական ուսադիրներ՝ ի հեճուկս քու հարազատ ազգային բանակին:

Այնուամենայնիւ, այսօր հպարտութեան եւ յուզմունքի զգացումներ կը խեղդեն մեր կուրծքերը՝ քանզի դարերու երազ եղած է ունենալ ազգային բանակ. աւելին՝ յաղթական բանակ, որ դարաբաղեան պատերազմին ար-

Շարք էջ 18

**Bedros S. Maronian** 818/500-9585

**Siamanto B. Maronian** 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աձիրաճեղաւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



### ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒՔԱՅԻՆ ՄԻՈՒՔԻՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ ԶԱԼԵՊԱՅԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԵՆՔ

#### ԱՐԱ ԱՀԱՐՈՆՅԱՆ

Հոծ բազմություններ մը փութացած էր Թեքեան Մշակութային Միությունիցի համաժողովի 17-րդ ներկայացուցչական, ներկայ ըլլալու Միությանս Լոս Անճելոսի մասնաճիւղին կազմակերպած ձեռնարկին:

Միևնուրեք հասարակական կազմակերպչական գործունէութիւններէն՝ Հայկական հայ համայնքը կորսնցնելու վրայ է երբեմնի իր հայաբոյր եւ շէնշող եռուզեռը՝ 2011 Մարտէն ի վեր ծաւալած սաստկացող եւ վտանգաւոր քաղաքացիական պատերազմին հետեւանքով: Քայլ պահելով զարգացող տաղանակին հետ, դասախօսական երեկոյնի նիւթն էր հաշտակարարութեան վիճակը այսօր, անոր անցեալն ու անորոշ ապագան:

Խնամքով պատրաստուած յայտադրին բացումը կատարեց Միությանս Կեդրոնի Խնամակալ Կազմի ատենապետ Գեորգ Բէշէկեան: Ան հանգամանօրէն ներկայացուց ձեռնարկին առաջին խօսք առնող՝ Սարգիս Պալմանուկեանը, որ նախկին հաշտակարար մըն է եւ վկայեալ ճարտարապետ Երեւանի Պետական Համալսարանին:

Պալմանուկեան մօտէն ծանօթ մը եղած է հաշտակարարական կեանքին, անոր մանրամասնութիւններուն, համայնքային կալուածներուն, վարժարաններուն, հաստատութեանց եւ հաշտակարար բարքերուն: Յարգելի գեղուցող մանրամասնեալ տեղեկութիւններ տուաւ Հայկական մէջ անցեալին կառուցուած հաստատութիւններուն մասին, որոնց մէկ կարեւոր մասը զարգացեր էր Մեծ Եղբունէն փրկուած եւ Հայկական հաստատուած հայութեան ճիւղերով: Անձնական հաւաքածոյէն բերուած սահիկներով, Պալմանուկեան ցուցադրեց հաշտակարար կեանքին գեղեցիկ պատկերներ եւ նմուշներ այն կառուցչներէն, որոնք ներկայիս փլատակ վիճակի մէջ են:

Ձեռնարկին երկրորդ գեղուցողը հրաւիրուելէն առաջ, երկարամեայ վարչական Մարալ Ոսկեանը ընթերցում կատարեց Արեւմտեան Ամերիկայի Սուրիահայութեան Օժանդակութեան Յանձնախումբի Ատենապետ Զաւէն Խանճեանի «Հայկական առաջին կայան» հատորէն հատուած մը հեղինակի ներկայութեան: Ապա բեմ

հրաւիրուեցաւ Թեքեանի բեմին ծանօթ երգիչ՝ Խաչիկ Նահապետեան, որ հրամցուց հայրենաբաղձ երկու երգեր՝ բարձրացնելով ներկաներուն տրամադրութիւնը:

Ձեռնարկին երկրորդ գեղուցողն էր վերջերս Գալիֆորնիա այցելած հաշտակարար ծանօթ սրտաբան, Երեւանի Պետական Համալսարանի շրջանաւարտ, Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան նախկին համաստեօնապետ, Սուրիոյ եւ Յորդանանի Շրջանային Վարչութեան երկարամեայ ատենապետ՝ Տոթթ. Գրիգոր Ատանալեանը: Յարգելի բժիշկն ու ընտանիքը երկար ժամանակով ենթարկուած էր Սուրիոյ անապահով վիճակին եւ քաղաքական վտանգաւոր վերիվայրուամենտուն:

Ձեկուցող հիւրը երեսուն վայրկեանի սահմաններուն մէջ յաջողեցաւ ճշգրիտ պատկերը գծել տիրող երեք տարիներու սուրիական ողբերգութեան, այդ ողբերգութեան քաղաքական հիմնական պատճառներուն, վերլուծեց միջին արեւելեան մրցակցութիւններուն արմատներն ու պատճառները եւ անոնց անկայունացող անդրադարձները՝ Սուրիոյ, ինչպէս նաեւ հարեւան իրաքի եւ Լիբանանի կացութիւններուն վրայ: Ատանալեան մատնանշեց Սուրիոյ հարեւան թուրքիոյ սնուցած վտանգաւոր ախորժակները Սուրիոյ ապագային նկատմամբ, ինչպէս նաեւ քրիստոնէայ համայնքներու հանդէպ պարզուող թշնամական կեցուածքները:

Գրիգոր Ատանալեանի շուրջ 25 տարիներու ազգային-հասարակական կեանքին ներս ունեցած հաշտակարար գործունէութիւնը վաւերականութիւն մը կը տար բանասիրն մեկնաբանութեանց: Ան լիովին ճանչցած է Միևնուրեք Մայր Գալուցիի եւ հայկականութեան թիկնաբար նկատուած Հայկական համաստեօնումը, եւ պատահական չէր որ Ատանալեան դրական մտայնութիւնը կը ներկայացնէր հաշտակարարութեան ապագայի զարգացումները:

Յիշատակելի եւ անհրաժեշտ նիւթերով հարուստ երեկոյ մը դարձաւ ձեռնարկը, մանաւանդ որ ներկայացուած մեկնաբանութիւնները կը կատարուէին նախկին եւ ներկայ հարազատ հաշտակարարութեան կողմէ:

### ՄՍԱՑԵԼ ԵՆՔ՝ «ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿԱՐԱ ՍՈՒՐՁԱ»ՅԻՆ ՆՈՒՐՈՒԲԱԾ ԳԻՐՔԸ

Ուրախալի եւ գնահատանքի արժանի աշխատասիրութիւն է՝ երախտաւոր դասական երաժշտարուեստագետի արժանիքները, մեր հայոց մշակութիւն ծառայութիւնները ապրող եւ գալիք սերունդներին մօտ պայծառ պահելու եւ նրա յիշատակը պանծեցնելու համար վառ ապացոյց:

Գիրքը խօսուի վկան է մեր խոհերուն, որը խորագրուած է՝ «Քրիստափոր Կարա-Սուրբա» հեղինակութեամբ՝ երաժշտագետ, իմբապար, կոմիտասի անուան կոնսերուատորիայի պատուաւոր պրոֆեսոր, պատուազրեբի եւ շքանշանների արժանեցած՝ Պրն. Գրիգոր Փիթէճեանի: Գիրքը հրատարակուել է Երեւանի կոմիտասի անուան պետական կոնսերուատորիայի պատուէրով 2013ին, լաթակազմ, ընտիր տպագրութիւն, պարունա-



կելով 612 էջ: Ըստ գրքում յատկանշուած ԵՊԿ-ի բացատրութեան՝ «Գիրքը նուիրուած է՝ կոմպոզի-

Շար.ք էջ 19

### ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ՄԵՆՔ



Արեւմտեան Միացեալ Նահանգներու Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Գործադիր Մարմինը կազմակերպած է դասախօսական երեկոյ մը՝ «Սուրիահայութեան տաղանայր եւ մենք» որ տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Փետրուարի 10, 2014ի երեկոյցեան ժամը 7ին, Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Նազարէթ եւ Սիմա Գալափեան սրահ՝ 3325 N. Glenoaks Blvd., Պրըպէնք:

Կը գեղուցեն՝ Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Արմաշ Եպս. Նալպանտեան եւ Հայկական բժիշկ Գրիգոր Ատանալեան:

Զաւէն Խանճեան, Գործադիր Մարմնի Ատենապետը, յայտնեց թէ՝ «Այս բացառիկ առիթ մըն է Սուրիահայութեան վիճակով մտահոգ մեր ժողովուրդին որ անձնապէս եղելութիւնը իմանան եւ վերանորոգեն իրենց յանձնարարութիւնը ձեռք երկարելու եւ անոնց գոյապայքարը ապահովելու»:

Հանրութեան մուտքը ազատ է: \*\*\*

Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմինը կազմուած է Օգոստոս 2012ին հետեւեալ անդամներով.- Հայ Առաքելական եկեղեցւոյ Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Թեմ, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմ, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Հայ Օգնութեան Միութեան Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Շրջան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւն եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն:

Հասցէն է՝ Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948: Համացանցի հասցէն՝ [www.SyrianArmenianReliefFund.org](http://www.SyrianArmenianReliefFund.org):

### ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՅՐՈՅ Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՄՍՈՒՐԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԶԱՆԴԵԱԸ



Դեկտեմբեր 13-ի երեկոյցեան ժամը 7-ին Յովսէփեան մանկամսուրի մանուկները, գոյնգոյն տարազներով ու մանկական անմեղ ժպիտներով, յոյս ու լոյս կը սփռէին Ս.Գրիգոր Եկեղեցւոյ՝ Եկաւեան ներքնասրահին մէջ: Ծնողներու, ազգականներու ու բարեկամներու հոծ բազմութիւն մը փութացած էր լեցնելու սրահը ու վայելելու Ամանորի առթիւ կազմակերպուած այս տօնահանդէսը:

Հանդէսը սկիզբ առաւ որոշեալ ժամուն, մանկամսուրի վարիչուհի՝ Տիգր. Գրիգորի Սոփիսեանի բացման խօսքով: Տիգր. Գրիգորի նախ բարի գալուստ մաղթեց ծնողներուն, շնորհաւորեց անոնց Նոր Տարին եւ Ս. Ծնունդը ապա՝

հրաւիրեց գանոնք դիտելու ու վայելելու Յովսէփեանի շնորհալի մանուկներու երգն ու պարը նուիրուած՝ Նոր Տարուան ու գայն յատկանշող աւանդական Կաղանդ Պապային:

Տօնականօրէն զարդարուած բեմը կը ստեղծէր արտակարգ խանդավառութիւն մը: Նախամանկապարտէզի Կանաչ դասարանի մանուկները մանկական հրաշալի կատարողութեամբ արտասանեցին՝ «է՛յ Ծերուկ Կաղանդ Պապայ», ու երգեցին Կաղանդ Պապային ու Նոր Տարուան նուիրուած՝ «Հաւաքուել ենք Մենք Այսօր» երգը:

Նախարարոցի Կարմիր ու Դե- Շար.ք էջ 19



# Massis Weekly

Volume 34, No. 3

Saturday, February 1, 2014

## Another Armenian Soldier Killed in Karabakh

STEPANAKERT -- An Armenian soldier has been killed in Nagorno-Karabakh in continuing ceasefire violations on Armenian-Azerbaijani "the line of contact," military authorities in Stepanakert said on Wednesday.

The Karabakh Defense Army said that the 19-year-old conscript, Karen Galstian, was killed on Tuesday by sniper fire from Azerbaijani army positions northeast of Karabakh. "An investigation is underway to clarify details of the incident," read a short statement released by the army.

Another Armenian soldier, Armen Hovannisian, was shot dead in that area on the night from January 19-20 in what the Armenian military says was an Azerbaijani commando raid. Skirmishes on the Karabakh frontline and the Armenian-Azerbaijani border dramatically increased following that incident. At least two Azerbaijani servicemen, both of them officers, have been killed by Karabakh Armenian forces since then.

According to Armenia's Defense Ministry, the truce violations have somewhat decreased this week. "I can't say that tensions have been defused.

But compared with January 20-22, they have eased a little," the ministry spokesman, Artsrun Hovannisian, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am).

In a related development, the Azerbaijani Defense Ministry announced late on Tuesday that its forces have captured a member of an Armenian commando which it said tried to infiltrate western Azerbaijan. The captive, Mamikon Khojayan, turned out to be a 77-year-old resident of Verin Karmiraghbyur, a border village in Armenia's northeastern Tavush province.

Some Azerbaijani media outlets reported that Khojayan was in fact detained by Azerbaijani villagers and handed over to military authorities. They circulated photographs and video of the shabbily dressed man surrounded by Azerbaijani civilians.

The Verin Karmiraghbyur mayor, Kamo Chobanian, said on Wednesday that Khojayan has suffered from mental disorders in recent years and apparently crossed into Azerbaijan by acci-

Continued on page 4

## France's Stance on Armenian Genocide Unchanged, Hollande Says in Turkey



ANKARA -- On a visit to Turkey French President Francois Hollande has made it clear that France's fundamental stance on the Armenian genocide was unchanged.

At a joint press conference with Turkish President Abdullah Gul both sides stuck to their positions in a row over France's official recognition of a genocide by Ottoman Turks of Armenians in World War I — something Turkey contests, AFP reports.

An attempt by French lawmakers in 2011 to declare it a crime to deny the genocide was struck down in February last year.

But Hollande made it clear that France's fundamental stance was unchanged.

"The task of remembering is always painful, but it must be done," he said. "What we have to work for is reconciliation by looking for what

happened and by recognising what happened."

Gul for his part said that "woes of 100 years ago are our common woes.... It is not right to pass these woes from generation to generation."

"What should be done, instead of reviving these woes, is to leave these to historians. This issue can not be tackled unilaterally," he said.

Hollande also touched on the need for "intense joint work" on the issue on the eve of the centennial anniversary of the 1915 events, the Hurriyet Daily News reports.

French president did not give a sign of renewing attempts to ban the denial of the genocide, but underlined that they would be "whatever the laws stipulated," referring France's recognition of the mass killings of Armenians as genocide in 2000.

## U.S. Firm Buys Vorodan Energy Facilities in Armenia



YEREVAN -- A U.S. energy company acquired on Wednesday Armenia's largest cascade of hydroelectric plants in a \$250 million deal that represents the single largest U.S. investment in the Armenian economy to date.

Under a takeover agreement signed with the Armenian government in Yerevan, the New York-based group ContourGlobal is to pay \$180 million and invest \$70 million in the three plants making up the Vorotan Hydro Cascade.

The Soviet-built facilities are located on the Vorotan river flowing through southeastern Syunik prov-

ince. With a combined operational capacity of 405 megawatts, they are nearly as powerful as the Metsamor nuclear plant that accounts for roughly 40 percent of Armenian electricity production.

"We are thrilled to have the opportunity to play an integral role in the Armenian power system and to make a significant and lasting contribution to a key part of the country's infrastructure," Joseph Brandt, the ContourGlobal chairman, said in a statement.

Garry Levesley, Brandt's deputy

Continued on page 2

## No Progress Reported in Armenian-Azeri Talks



PARIS -- International mediators and the foreign ministers of Armenia and Azerbaijan reported no progress towards a resolution of the Nagorno-Karabakh conflict after fresh talks held by them in Paris late on Friday.

Official Baku and Yerevan exchanged barbs, while the U.S., Russian and French mediators co-heading the OSCE Minsk Group warned that increased truce violations in the conflict zone are reducing chances of a breakthrough in the long-running negotiation process.

"The Co-Chairs expressed their deep concern over continued violence in the region, and stressed that recent incidents undermine negotiations and diminish the prospects for peace. They

called on the sides to fully and unconditionally respect the terms of the ceasefire agreement," read a statement released by the troika.

"We need a greater political commitment from all parties to find a peaceful settlement for Nagorno-Karabakh. Status quo should be unacceptable," James Warlick, the Minsk Group's U.S. co-chair, wrote on his Tweeter account separately.

Armenian Foreign Ministry spokesman Tigran Balayan was quick to leave the following comment there: "We need to force Azerbaijan to stop provocations and irresponsible actions and hate propaganda," he said.

Continued on page 4

## Constitutional Court Suspends Armenian's Pension Reform Law

YEREVAN -- The Constitutional Court suspended on Friday the controversial reform of the national pension system pending a ruling on an appeal lodged by Armenia's leading opposition parties.

The four parties appealed to the court last month after failing to scuttle the passage of a corresponding government bill by the Armenian parliament. The bill, which came into effect on January 1, requires Armenians born after 1973 to pay social security taxes equivalent to between 5 and 10 percent of their monthly wages, in addition to contributions made by their employers. The government says the reform will ensure decent pension plans for citizens when they retire at age 63.

The reform has sparked vehement objections from young and relatively well-paid professionals. Thousands of them as well as other disgruntled Armenians took to the streets of Yerevan last Saturday to protest against what they see as an unfair and unconstitutional measure.

Representatives of the opposition minority in the National Assembly also joined the protest. They claim that the pension reform breaches, among other things, citizens' property rights guaranteed by the Armenian constitution.

The Constitutional Court announced that it will open hearings on the opposition appeal on March 28. In a statement, the court said the reform will be suspended at least until it hands down a ruling.

Meanwhile, President Serzh Sarkisian again defended the controversial reform, saying that it will bear fruit and be recognized as "historic" in the future. Visiting the Ministry of Labor and Social Reforms, Sarkisian instructed officials there to do a better job of explaining its merits to affected citizens. "You should mobilize not only the entire ministry staff but also various experts, people, our supporters so that they explain in detail the essence, significance and purpose of the reform," he said.

## President Sarkisian's \$186,000 'Rejuvenation Treatment' In South Korea Revealed

SOUL -- President Serzh Sarkisian has undergone stem cell therapy in South Korea aimed at rejuvenating his body, a Korean newspaper revealed on Friday.

The daily "Chosun Ilbo" reported that Sarkisian became this month the first foreign head of state to receive treatment at Chaum Center, a rejuvenation clinic located in the Gangnam district of the capital Seoul. A photograph published by it showed him seated in a medical arm-chair and surrounded by South Korean doctors, his chief bodyguard Vachik Ghazaryan (in red sweater) and Ara Abrahamian, a Russian-Armenian businessman, President of Union of Armenians in Russia.

"Since opening in 2010, Chaum has drawn many rich people from around the world who come to Seoul in their private jets. Among them were Chinese and Canadian business tycoons, the prime minister of Kazakhstan and Saudi and UAE royalty," The Chosunilbo reports.

"The group visited Chaum every day during their weeklong stay here and had treatment including stem cell therapy, spa and anti-aging therapy, body polishes and massages and weight-control programs," wrote the paper. It said the treatment which lasted from January 9-17 cost around \$186,000, a sum exceeding Sarkisian's annual salary.

The presidential administration essentially confirmed the information. Sarkisian press secretary, Arman Saghatelian told Epress.am that the president visited the South Korean clinic for "preventive medical purposes" while on vacation.

Saghatelian said that the individuals accompanying Sarkisian were also treated there. "The cost of medical services provided to Serzh Sarkisian made up only a very small portion of the [reported] total and it was paid



from his officially declared assets," he claimed.

That Sarkisian has had stem cell therapy was first suggested last week by the Yerevan newspaper "Haykakan Zhamanak," which quoted unnamed sources close to the Armenian government. Saghatelian, dismissed this as "ludicrous gossips" in comments to A1Plus.am on Tuesday.

Saghatelian shrugged off suggestions that the Armenian leader may have health problems. The spokesman for ruling Republican Party of Armenia (HHK), Eduard Sharmazanov, likewise insisted on Friday that Sarkisian is "very healthy."

Levon Zurabian, a leader of the opposition Armenian National Congress (HAK), questioned those claims. "If he had problems with health they should have been presented to our society. It turns out that they tried to hide them but failed to do even that," Zurabian told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). He described news of the rejuvenation treatment as "scandalous."

Incidentally, Sarkisian sacked Armenia's ambassador to South Korea shortly after the "Haykakan Zhamanak" report. There was no official explanation for the move.

Sarkisian went on vacation on January 7. The presidential press service said at the time that he will spend it in an unspecified foreign state. It gave no details.

## Rep. Schiff Meets with Damascus Primate Bishop Armash Nalbandian



WASHINGTON, DC -- This week, Rep. Adam Schiff (D-CA) met with His Grace Bishop Armash Nalbandian, primate of the Armenian Church of Damascus, who is in the United States with several other Syrian Christian leaders to discuss the plight of Syria's Christians.

"Bishop Nalbandian and his colleagues described the extreme insecurity and fear of their people and asked Congress and the President to speed the disbursement of aid to the millions of Syrians who have suffered from the civil war, but remain in Syria," said Schiff. "The Bishop's report echoes what I have been hearing from other sources about the disparity in resources directed to Internally Displaced Persons (IDPs) and those who have escaped to one of the neighboring states.

"I have been focused on Syria and the plight of Christians there since

the start of the uprising against Bashar Assad. We must continue to press for greater assistance and to permit the humanitarian parole of Syrians with approved immigrant petitions to the United States, many of whom are Christians."

Reps. Schiff and Frank Wolf (R-VA) wrote last year to the Secretary of the Department of Homeland Security (DHS) urging the use of humanitarian parole – which would provide a temporary visa for those in an emergency situation – to the estimated six thousand Syrian nationals' cases with approved immigrant petitions. This would allow Syrians who have been waiting for a visa to reunite with their family members in the United States without delay. Of the fleeing refugees, members of religious minorities, including the country's Christian population, are especially at risk, and many have sought refuge in the United States.

## U.S. Firm Buys Vorotan Energy Facilities

Continued from page 1

who signed the agreement in Yerevan, also stressed its significance. "We will do our best to contribute to Armenia's energy security," the government's press office quoted Levesley as saying at the signing ceremony attended by Prime Minister Tigran Sarkisian.

John Heffern, the U.S. ambassador to Armenia, was also present at the ceremony, underlining Washington's strong support for the acquisition. Heffern was reported to say that it will strengthen U.S.-Armenian relations.

The Vorotan cascade's impending sale was announced by the U.S. State Department last November following a meeting in Washington of the U.S.-Armenia Joint Economic Task Force. The department said that the

deal will be partly financed by the U.S. Overseas Private Investment Corporation (OPIC).

ContourGlobal already owns or operates 33 power plants in 17 countries, including Poland, Ukraine and Romania. "ContourGlobal has extensive knowledge and experience in operating in the region and looks forward to adding these significant power plants into our portfolio and making further improvements and investments in them," Levesley said.

The U.S. firm plans to create 150 new jobs at the Vorotan plants as part of a six-year modernization plan envisaged by the deal.


The deal also marked a first-ever multimillion-dollar Western investment in Armenia's energy sector dominated by Gazprom and other Russian energy companies.

Վերջին Լուրերու Համար



Հայ news.am

## Armenian National Institute Website Sees 1 Million More Hits in 2013



WASHINGTON, DC — With the continuing expansion of the information on the Armenian Genocide available on the Armenian National Institute (ANI) website, a marked increase in the number of visitors was registered this past year, jumping by one million hits, and growing the site from two million to close to three million hits in 2013.

Public and scholarly interest is clearly registering with ever growing utilization of ANI materials. Both in anticipation of heightened worldwide interest as the centennial approaches in 2015 and as a result of increasing Turkish openness on the subject of the Armenian Genocide, ANI has been preparing major resources and making them available to the public, to support educators, to encourage researchers, and to assist Armenian community efforts.

In March 2013, ANI, along with, the Armenian Genocide Museum of America (AGMA), and the Armenian Assembly of America (Assembly), issued a digital exhibit titled WITNESS TO THE ARMENIAN GENOCIDE: Photographs by the Perpetrators' German and Austro-Hungarian Allies. The ten-poster set included an introductory page, a detailed timeline, a color-coded map geographically matching the photographs with their location, and seven pages displaying 34 captioned historic photographs depicting the deportations, massacres, and concentration camps. Since its release, over 75,000 copies have been downloaded. Additional downloadable exhibits will be made available, and as with the 2013 digital and printable exhibit, they will be distributed free of charge.

As part of its ongoing program to promote the teaching of genocide and human rights and the lessons of the Armenian Genocide, in early 2013 ANI announced the release by Routledge publishers of the fourth edition of Centuries of Genocide: Essays and Eyewitness Accounts, the genocide and human rights studies textbook widely used in college and high school courses. This new edition addresses examples of genocides perpetrated in the nineteenth, twentieth, and twenty-first centuries. The chapter on the Armenian Genocide, which has appeared since the first edition of the publication, is

authored by ANI Director Dr. Rouben Adalian. More than 50,000 copies of the publication have been sold over the years.

This publication was followed by the release of the online and print versions of the second edition of the Encyclopedia of Race and Racism issued by Macmillan Reference, a major publisher of educational materials, to which Dr. Adalian contributed an entry on the Armenian Genocide. The article appears in a section dedicated to Genocide and Crimes Against Humanity that includes entries, among others, on the Assyrian Massacre, Bosnia, Cambodia, Japanese Occupation, Mayan Genocide in Guatemala, Rwanda, and Sudan.

As part of its continuing service to educators and to coincide with the release of Centuries of Genocide, ANI expanded its "Resource Guide" and other sections of the "Education" component of the ANI website. Dozens of resources were selected for their instructional value and are listed for the benefit of students and teachers. ANI also expanded the database it maintains on Armenian Genocide memorials.

ANI2ANI also introduced a new section to its website documenting the extent of "Press Coverage" and discussion of the Armenian Genocide over the course of the past decade. As part of this expansion, the section documenting the growing trend of international affirmation of the Armenian Genocide was also updated.

The "Affirmation" section of the website reflects municipal, state, and federal level recognitions from around the world. With 174 official documents posted supporting the record of affirmation by 43 of the United States, another 50 posted official enactments attest to the extent of international affirmation of the Armenian Genocide with 21 countries formally on record. To facilitate navigation of the growing list of international recognitions, a summary page listing the countries in alphabetical order is provided.

Continuing its services, ANI, in coordination with AGMA and the Assembly, is preparing to issue by April 2014 a major new online exhibit on the Armenian Genocide featuring extensive new photographic and documentary evidence.

## Regarding Syrian Armenians' Crisis



By Bedros Kojian, M.D.

There is a great disparity in a statement of establishing a magnanimous Private Foundation in Armenia, successful fund raising activities and donations to NON-VITAL, but important Armenian causes. And the GLARING absence of funds and/or donations to the Syrian Armenian CRISIS, eloquently stated in "Will You Be The First to Call" article by Mr. Zaven Khanjian.

It is unconscionable that most of us, Armenians, like the rest of the world are acting as if we are oblivious that the entire vibrant and prosperous Syrian Armenian Community is in a catastrophic state. To survive, most of them were forced to leave their destroyed and looted homes, businesses and belongings that took them a century to built or acquire, hoping that in a "short period the nightmare" will be over, and they will return, reclaim and rebuild, but unfortunately as the conflict lingers it is becoming more and more clear that this is an illusion rather than a reality.

As an American Armenian, and the son of genocide survivors, (both parents) I, among others feel their pain and suffering. It reminds me of my parents' stories of survival of the Armenian Genocide. At that time they were somewhat unfortunate because no one actually helped them except their skill, hard work and the determination to survive.

Now times have changed, thanks to the United States of America and other nations, we not only have a roof on our head and food on our table, we also have enough to spare to help others, especially our own Syrian Armenians that are destitute and in critical need.

Fridtjof Nansen, the Norwegian, scientist, explorer, statesman, humanitarian, and Noble Prize Laureate, after World War 1, was commissioned by the League of Nations to settle refugees and prisoners. He successfully helped settle hundreds of thousands of

Germans, Austrians, Greeks, Turks, Russians and Armenians. In 1925, he was able to settle about seven thousand Armenians in soviet Armenia, ten thousand in Lebanon, and 40 thousand in Syria. The task was enormous and he needed additional funds, but his request to the League of Nations and his affluent friends for additional funds fell to deaf ears.

Demoralized he returned to his desk and noticed an envelope made of cheap paper addressed to him. Curiously he opened the envelope and found "a dime" and a note that said: "We are poor, and all we can afford is a dime, but we feel the pain and suffering of the Armenian refugees." That gave him the idea to talk to people and lecture, thus he raised 10 cents and more at a time and eventually he raised hundreds and thousands of dollars to help settle many more refugees.

Now in this gravel state of the Syrian Armenian community, it is our turn to become "Fredtjof Nansens." Through facebook, emails, texting and twitting, within seconds we can spread the word to our family, friends and others. And if we each contribute \$5.00 or \$10.00 or \$1,000.00 or whatever else; me, you or others can afford, ANYTHING EXCEPT NOTHING, we will raise substantial amounts of money, and hopefully even enough to spare some to our Syrian brothers and sisters.

Please write your checks to SARF (Syrian Armenian Relief Fund) and mail to:

SARF (Syrian Armenian Relief Fund)

POBox 1948

Glendale, CA 91209-1948

All donations are tax-deductable.

If you need additional information please get in touch with Zaven Khanjian Chairman of SARF Executive Committee at Zaven@kanjyanrealty.com

I am not a committee member, nor a Syrian Armenian.

Thank you. I am counting on you.

## Last Farewell to Aram Gharabekian

YEREVAN (Armradio.am) -- The public funeral service for renowned conductor Aram Gharabekian was held at the Aram Khachaturian Concert Hall today. The ceremony was attended by Armenian President Serzh Sargsyan.

Aram Gharabekian, who passed away on January 10, was laid to rest at the City Pantheon in Yerevan.

Born in 1955, he graduated from the New England Conservatory with a Master's degree in Composition, and continued his postgraduate studies in Musical Phenomenology at Mainz University in Germany. He stud-

ied conducting with Franco Ferrara in Italy, and was one of a few pupils of the legendary conductor Sergiu Celibidache. He was also granted a fellowship to study composition and conducting under Jacob Druckman and Leonard Bernstein at Tanglewood Music Center.

From 1997 until 2010 Mr. Gharabekian served as Music Director of the National Chamber Orchestra of Armenia, leading this acclaimed ensemble on tours to Greece, the United Arab Emirates, Cyprus, Switzerland, England, Russia, Lebanon, Georgia, Germany, France, Canada and the U.S.

## Sinan Sinanian joins EH National Bank's Board of Directors

BEVERLY HILLS -- Sinan Sinanian has joined the Board of Directors of EH National Bank. After graduating from the American University of Beirut in 1974 with a Bachelor's degree in Civil Engineering, Sinan worked with a Japanese construction company, IHI (Ishikawajima-Harima Heavy Industries Co., Ltd.), with extensive international contracts. Sinan permanently moved to California in 1983, and established with his brother a real estate development and construction company, Sinanian Development, Inc. which engages in construction of public, commercial and multi-family projects throughout Southern and Northern California.

Sinan is very active in the Armenian community in Southern California. He is a member of the Central Board of Directors of AGBU, the largest Armenian philanthropic organization, as well as a member of the Board of the American University of Armenia. Mr. Sinanian also serves as a



member of the Board of Directors of Ararat Home of Los Angeles, a board and care and skilled nursing facility housing around 350 elderly individuals. He is a member of United Armenian Fund, the Leadership Council of USC Institute of Armenian Studies, and chairman of the AGBU MDS School in Canoga Park, the largest Armenian school in United States.

Mr. Sinanian is also the proud recipient of the Ellis Island Medal of Honor.

## SARF Presents a Lecture on the Syrian Armenian Crisis

GLENDALE -- "The Syrian Armenian Crisis" is the title of a lecture organized by the Syrian Armenian Relief Fund (SARF) Executive Committee, which will be held on Monday, February 10, 2014, at 7:00 p.m., at the Nazareth and Sima Kalaydjian Hall of the Western Diocese, 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504.

The Primate of the Armenian Church Diocese of Damascus, Bishop Armash Nalbandian, and Dr. Krikor Adanalian from Aleppo, Syria, will be the two lecturers.

"This is a great opportunity for our concerned community to hear first hand the status quo on the ground and renew our commitment to reach out and help the Syrian Armenians survive this crisis!" remarked Zaven Khanjian, SARF Executive Committee Chairperson.

Admission is free to the public.

\*\*\*  
The following churches, charities and organizations came together to form the Syrian Armenian Relief Fund in August 2012: Armenian Catholic Eparchy in North America; Armenian Evangelical Union of North America; Western Diocese of the Armenian Church; Western Prelacy of the Armenian Apostolic Church of America; Armenian General Benevolent Union; Armenian Missionary Association of America; Armenian Relief Society of Western U.S.A.; Armenian Democratic Liberal Party; Armenian Revolutionary Federation-Western U.S.A.; and Social Democrat Hunchakian Party-Western U.S.A. The SARF mailing address follows: P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948; the web site address follows: [www.SyrianArmenianReliefFund.org](http://www.SyrianArmenianReliefFund.org).

## No Progress Reported

Continued from page 1

Foreign Ministers Edward Nalbandian of Armenia and Elmar Mammadyarov met in Paris for a second round of talks aimed at building on progress that was reportedly made at the most recent Armenian-Azerbaijani summit held in Vienna last November. The mediators said earlier that Nalbandian and Mammadyarov will try to "prepare for the next summit."

The co-chairs' statement on the Paris talks made no mention of the next meeting of the Armenian and Azerbaijani presidents. It said instead that Warlick, Russia's Igor Popov and France's Jacques Faure will again visit the conflict zone soon to "continue talks with the Presidents."

The Paris meeting was overshadowed by an upsurge in skirmishes on the Armenian-Azerbaijani border and "the line of contact" around Karabakh. The Armenian side says it resulted from a Azerbaijani commando raid on a Karabakh

army outpost on January 19.

According to a statement by the Armenian Foreign Ministry, Nalbandian accused Baku of escalating tensions, making fresh bellicose statements and voicing territorial claims to Armenia when he met with Mammadyarov and the mediators. He called that a "serious blow to the negotiation process."

For his part, Azerbaijani Foreign Ministry spokesman Elman Abdullayev quoted Mammadyarov as saying in the French capital that the conflict will be resolved "as soon as Armenia's armed forces liberate Azerbaijan's occupied territories." "Restoration of Azerbaijan's territorial integrity is the basis of negotiations between Azerbaijan and Armenia," Abdullayev said in a statement cited by the Trend news agency.

Balayan dismissed the statement, saying that it "does not correspond to the content of the negotiations." "One gets the impression that the Azerbaijani side has negotiated with itself," he wrote on his Facebook page.

## Manana Youth Center Wins Major United Nation's Democracy Fund Grant in 2013



Manana Youth Center prepares for a regional exhibition in Gyumri.

YEREVAN -- The Manana Youth Center won a major two-year grant from the United Nation's Democracy Fund, which enables the Manana Youth Center to conduct a dozens of weeklong multimedia workshops for children throughout Armenia.

"We have been working towards the goal of enabling all of country's young people to benefit from our proven educational programs." Said Ruzan Baghdasaryan, Executive Director of the Manana Youth Center. "Our workshops will introduce basic skills in the areas of journalism, photojournalism and filmmaking."

Participants, under the supervision of our expert instructors, produced films, shot photos and conducted interviews. An exhibition and film screening was held in Gyumri in the fall to feature Manana student's works from the various regions. In 2014, these workshops will continue and a curated final exhibition will be held in Yerevan.

In August, Manana Youth Center organized a crowd funding campaign on Indiegogo and raised \$5,000 for *Sand Animals*. The students of the Manana Animation Studio are currently implementing this animation project.

"This is the seventh year The Paros Foundation is providing support to the Manana Youth Center in the form of a grant for operational funding and quality program and office space. Said Peter Abajian, Executive Director of The Paros Foundation. "It is inspiring that the Manana team has attracted prestigious funding for their training and the development of specific creative projects. Providing these opportunities for Armenia's children encourages a young persons curiosity and his or her ability to express themselves."

## Another Armenian Soldier Killed in Karabakh

Continued from page 1

dent. Chobanian said that the elderly man was last seen by his neighbors on Tuesday afternoon.

"He carried a bucket and told people that he is going to pick grapes or berries. Grapes in winter?"

Other 2013 milestones included the presentation of two feature film documentaries at the Golden Apricot International Film Festival by Manana Films, the film production division of Manana Youth Center.

*The Beginnings*, a co-production documentary with Turkey, directed by Somnur Vardar, and *Hit The Road: India* - a travel adventure documentary, recognized later as an amazing adventure film of 2013 by Vimeo and Vanity Fair Italy were both well received by audiences. *Hit The Road: India* is now being successfully distributed via major digital platforms and will be broadcasted by several TV channels in 2014. The Manana film *Everyone, who will meet me*, won the Highlight Award at Young Filmmaker International Festival in Rio de Janeiro, Brazil.

The Manana Youth Center is located in Yerevan, Armenia and provides multimedia training and afterschool education to 75 students ages 8 to 18 in the areas of filmmaking, journalism, photography and animation. Children engage in these hands-on activities, but most importantly, the skills they learn greatly improve their critical thinking.

In 2014 funding is needed to upgrade their equipment and to expand the program for an additional 20 children. The Manana Youth Center depends on support from the community and donors to meet its important mission. To get involved please contact Peter Abajian (310) 400-9061; and, to contribute please visit [www.mananayouth.org](http://www.mananayouth.org). Support from The Paros Foundation underwrites all administrative expenses allowing donor contributions to be allocated directly to Manana's student programs.

# ՍԱՅ ԶԿԱՅ ԵՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՈՒ ԵՇՄԱՐՏԱԽՕՍԻՆ ՅԱՍԱՐ ԶՆՉԱԿԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍ ՍԱՐԳԻՍ ՏԵՐՈՒՆԻԻ ՆԱԿԱՏԱԿՈՒԹԵԱՆ 85-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Աւանդութեան համաձայն իւրաքանչիւր Յունուարի վերջընթեր շաբաթը աշխարհասփիւռ Հնչակեան ուսանողութիւնը եւ երիտասարդութիւնը կ'ոգեկոչեն Հնչակեան գաղափարախօս, աննկուն մարտիկ Սարգիս Տերունիի նահատակութեան յիշատակը:



Այս տարի Սարգիս Տերունիի նահատակութեան 85-րդ տարելիցին առթիւ, Պէյրութի Տերունի Ուս. Երիտ. Միութիւնը նախաձեռնած էր յատուկ միջոցառումներ ոգեկոչելու համար նահատակ ընկերոջ յիշատակը: Շաբաթ, 18 Յունուար 2014-ին, երեկոյեան ժամը 4:30-էն սկսեալ մինչեւ ուշ գիշեր Տերունի Ուս. Երիտ. Միութեան երիտասարդական դիւանը կազմակերպած էր հսկումի երեկոյ, Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցոյ շրջափակին մէջ:

ցուց անձը գոհել գաղափարին, հաւաքականութեան եւ Մայր Կուսակցութեան համար:

Շրջափակը զարդարուած էր Սարգիս Տերունիի եւ Հնչակեան Կուսակցութեան եւ այլ նահատակ հերոսներու նկարներով ինչպէս նաեւ երէցական երիտասարդական դիւաններու կողմէ պատրաստուած ձեռագիրն աշխատանքներով:

Ան սորվեցուց գաղափարական կեանքին մէջ ըլլալ յանդուգն եւ վճռակամ»:

Սոյն հսկումին կատարուեցաւ մոմավառութիւն առ ի յարգանք անմահ հերոս Սարգիս Տերունիի յիշատակին, ինչպէս նաեւ ուսանողական դիւանի անդամներուն կողմէ արտասանուեցան խօսքեր:

Ընկ. Կարէն Աւագեան անդրադարձաւ նահատակ հերոս Սարգիս Տերունիի գործունէութեան, որու հիմնական առանցքը դարձած էր հակագաղութատիրութիւնը: Ան միշտ հաւատացողը եղած էր սփիւռքահայութեան հայեացքին դէպի մայր հայրենիք: Ան կը տեսնէր ու կը հաւատար յայտարարուած անկախ հայրենիքի գոյութեան եւ որպէս նշանաբան՝ կը հրաւիրէր հայ ժողովուրդը, մանաւանդ սփիւռքահայութիւնը որ իր տաղաւարները հաստատէ Արարատեան դաշտին մէջ, Մասիսի ստորոտը»:

Ընկերուհի Քրիստին Շահինեան ամփոփ ձեռով ներկայացուց Սարգիս Տերունիի կենսագրական գիծերը, իսկ ընկերուհի Յոլին Սուլթանեան խօսք առաւ ըսելով. «Սարգիս Տերունի կը հաւատար թէ գաղափարական սկզբունքները շատ աւելի բարձր են քան եսակեղրոն հաշիւները: Ան մեզի սորվե-

Քահեմեան մեջբերում մը կատարեց Սարգիս Տերունիի քաղաքական, ազգային եւ կուսակցական աշխօժ գործունէութեան մասին, որ ան պայքարեցաւ ֆրանսական գաղութատիրութեան դէմ՝ ըլլալով արաբ ժողովուրդին կողքին, ինչպէս նաեւ սորվեցուց ըլլալ յանդուգն եւ վճռակամ գաղափարական եւ ազգային կեանքին մէջ: Հսկումի ընթացքին երիտասարդական դիւանի անդամները մէջբերումներ կը կատարէին Սարգիս Տերունիի նշանաւոր լոգուններէն: «Տերունին է եւ կը մնայ Հնչակեան»: «Վատ է ան որ ճշմարտախօսը լռեցնելու համար գնդակ կ'արձակէ»:

Տարբ. էջ 20

Երեկոյեան ժամը 6:30-ին հնչեցին Ս. Գէորգ եկեղեցոյ զանգերը վերջիչեցնելու համար մեծ գաղափարախօս Սարգիս Տերունիի նահատակութեան ճշգրիտ ժամը: Ներ-

կաները վերանորոգուած Տերունիի ուխտով վերադաձան իրենց տուները:

Կիրակի, 19 Յունուար 2014-ի առաւօտուն Նոր Հաճնոյ Սուրբ Գէորգ եկեղեցոյ մէջ յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Սարգիս Տերունիի եւ բոլոր Հնչակեան նահատակ հերոսներուն, որոնք գոհուեցան յանուն հայութեան եւ հայրենիքի:

Սոյն միջոցառումին ներկայ էին Ս.Գ.Հ.Կ. Լիբ. Շրջանի Վարիչ Մարմնի անդամները եւ Վարիչ Մարմնի ատենապետ՝ Ընկ. Ալեքսան Գէօրգիեանը, մասնաճիւղերու եւ միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Ս.Գ.Հ.Կ. «Հայկ Բժշկեան» Պատանեկան միութեան անդամները:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք ներկաները իրենց անձնական ինքնաշարժներով եւ «Տերունի»-ի վարչութեան կողմէ յատկացուած փոխադրակառքերով ուղղուեցան դէպի Ֆրնէն էլ Շրպպէքի Ազգային գերեզմանատան կուսակցական պանթէոն, վերանորոգելու իրենց ուխտը: Ուխտագնացութեան բացումը կատարեց Հ.Մ.Մ.-ի փողերախումբը Հայրենիքի, Լիբանանի եւ Ս.Գ.Հ.Կ.-ի քայլերգներով, ապա Ս. Գէորգ եւ Ս. Յարութիւն եկեղեցիներու հոգեւոր հովիւներ՝ Տէր Նարեկ Քհնյ. Հեծինեանի եւ Տէր Ղեւոնդ Քհնյ. Լոշխաճեանի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

Տարբ. էջ 20

## Ս.Գ.Հ.Կ. ՖՐԱՆՍԱՅԻ «ՆԱԶԱՐԲԷԿ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՍԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՇԷ ԶՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ



Ֆրանսայի «Նազարբէկ» Հնչակեան երիտասարդաց Միութիւնը կազմակերպած էր յիշատակի երեկոյ մը, Հայ Երիտասարդական կեդրոնին մէջ (CJA), Ալֆորվիլ:

Տինք միշտ ջատագովը եղած էր թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան պաշտպանութեան, ինչպէս նաեւ միշտ փորձած էր կամուրջներ հիմնել թուրք հասարակութեան եւ հայերու միջեւ:

Այս յիշատակի միջոցառման իրենց մասնակցութիւնը բերած էին, «Նոր Յաւակ»-ի խմբագիր Յարութ Կոպէլեան, լրագրող Վիլմա Գուլոմճեան եւ հրապարակագիր Անժէլ Տիքմէ:

Հրանդ Տինք բացառապէս խօսած էր Հայոց դէմ կազմակերպուած եւ գործադրուած Յեղասպանութեան մասին եւ յաջողած էր...: Սակայն այդ յաջողութեան գինը շատ սուղ էր...:

Բացման խօսքով «Նազարբէկ»-ի ներկայացուցիչը անդրադարձաւ «Ակիօս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր, հասարակական գործիչ Հրանդ Տինքի սպանութեան դրդապատճառներուն մասին: Ան նչեց թէ,

Հետեւաբար, իւրաքանչիւր գեկուցաբեր ներկայացուց Տինքի գաղափարները թուրքիոյ ներքին բարեկարգութեան մասին, հիմնուած դեմոկրատական սկզբունքներու վրայ, մտահոգութիւնները

եւ անոր հեռատեսութիւնը, ճշմարտութիւնը եւ անկեղծութիւնը:

Անոնք յիշեցուցին թէ Հրանդ Տինք կը խօսէր թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան եւ փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութեան մասին:

Թեան փրկութիւնը:

Սպանութեան անցած են եօթ տարիներ եւ պատասխանատուները տակաւին կը մնան անպատիժ:

Յիշատակի երեկոյի աւարտին, վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեցին երեք գեկուցաբերներուն, ինչպէս նաեւ Ֆրանսայի մէջ Հայաստանի Հանրապետութեան լրագոր ներկայացուցիչ Վահագն Աթապեքեանին իր մասնակցութեան համար, եւ երե-

Սակայն այսօր, դժբախտաբար թուրքիոյ մէջ արգիլուած է խօսքի ազատութիւնը, եւ բոլորս ականատես կը դառնանք այն իրողութեան, թէ ինչպէս լրագրողներ



եւ մտաւորականներ, որոնք կ'ուզեն հետեւիլ Հրանդ Տինքի գծած ուղիին կը բանտարկուին

կոն աւարտեցաւ հետեւեալ նշանաբանով «Հայ երիտասարդութիւնը միակ յոյսն է հայութեան եւ Հրանդ Տինք որպէս խորհրդանիշ իր նահատակութեամբ փաստեց թէ անկարելի բան չկայ»:

# «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԵԾԻ ԵՂԵՌՆԻ ԶՈՐԵՐՈՒ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ՀԱՐՑԸ» ԳՐՔԻ ՇՈՒՐՉ

ԴՈՎՏ. ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ԱՒԱԳ ՔՉՆՑ.  
ՆԵՐՍԷՍԵԱՆ

Հետաքրքրութեամբ կարդացի Դկտ. Կոստանեանի գրախօսականը՝ Դկտ. Աբել քահանայի «Հայ եկեղեցին եւ մեծի Եղեռնի գոհերու սրբադասման հարցը» գրքի: Քահանի որ ձեռքիս տակ չունեմ հեղինակի գիրքը, ապա չեմ կարող լինուի գրել աշխատութեան արժանիքների մասին, բայց արծարծուած հարցն անկախ աշխատանքից, ունի մեծ նշանակութիւն: Մեծ Եղեռնի գոհերի սրբադասման հարցին անդրադարձել են բազմաթիւ գիտնականներ 1924թ. սկսած:

Նախ, սխալ է հաստատել շատ յաճախ կրկնուած այն թիւր կարծիքը, որ Գրիգոր Տաթևացին վերջին անձն էր, որ Հայաստան-այց եկեղեցին դասել է սրբերի շարքին: Ամէն Կիրակի, Սրբազան Պատարագի մէջ, եւամեծ «Յովուաց եւ հովուպետաց» շարքին չիշում ենք նաեւ լուսաւոր անունը Մովսէս Գ. Տաթևացի հայրապետի (1629-1632), որն ըստ Առաքել Դաւրիթեցու, գնահատականին եղաւ «լուսատու տանս Արամեան»: Այդ հիման վրայ Սիմէոն Ա. Երեւանցի կաթողիկոսը, որը հայոց Տօնացոյցի վերջին բարենորոգիչն էր, 1777 թ. Տօնացոյցի մէջ մտցրեց Մովսէս Գ. Տաթևացու անունը, որը դեռ չի նշուում որպէս տօնելի սուրբ: Համաձայն Պատրիարք Օրմանեանի, Մովսէս Տաթևացին «պաշտելի դարձաւ», որովհետեւ իր համար «վկայուած է եւս, թէ էր մաքրակենցաղ եւ սրբասնունդ, երկայնամիտ եւ ողորմած, եւ թէ զօրաւոր էր աստուածաշնորհ վարդապետութեամբ, եւ քաղցր քարոզութեամբ, որով գիտէր հոգիներ շահիլ՝ ուղղելով ի ճանապարհս արդարութեան»:

Մեսրոպ Մաշտոցն իր «Յաճախապատուած ճառերում» սահմանել է Հայ եկեղեցու սրբադասման կարգն ու կանոնը համաշունչ Տիեզերական եկեղեցու սրբադասման սկզբունքին այս բանձեւումով.

«Այլ սուրբ ամենայն գործեցին զարդարութիւն եւ հոգեւոր մշակութիւն... Եւ լցին տիեզերս կենաց բանիւն... Երկայնամտութեամբ եւ հանճարով զամենեսեան որսալ հոգեւոր ուղիանաւ առ բարեպաշտութիւն» (All the saints exercised justice and spiritual culture filled the universe the Word of life with patience and wisdom enticed everyone with the aid of spiritual trawl into life of worship): Եւ հենց այդ բարեպաշտական կեանքը շահելու համար է, որ հայ հաւատացեալն ընթերցում եւ վերընթերցում է սրբերի կեանքերը՝ թափանցելով նրանց հոգեւոր կեանքերի մէջ՝ վերիմաստաւորելու իր քրիստոնէական հաւատքը: Կորին վարդապետն իր «Վարք Մաշտոցի» մէջ սուրբի կեանքը գրի առնելու հիմնական պատճառ է համարում. «այլ յօրինակ քաջալերիչ՝ հոգեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նորօք աշակերտելոց իցեն յազգս ազգաց» (And we related this not for the glory of the saints of God, who already have been honoured for their most luminous faith and life, but as an inspiring example to their spiritual sons and to all who, through them, will be taught from generation to generation):

Հայ եկեղեցին հարազատ մնալով տիեզերական եկեղեցու աւան-

դոյթներին, սրբադասման յատուկ կարգ չունի: Հայ եկեղեցին իր հաւատացեալների ճանաչումը համարել է կարեւորագոյն նշանը որեւէ մէկին սուրբ հռչակելու համար (այդպէս են սրբացուել մեր բոլոր հայ սրբերը): Կաթողիկ եկեղեցին պապի իշխանութիւնը ամրապնդելու համար, ժամանակի ընթացքին սրբադասման իրաւունքը վերապահել է միայն Պապին՝ 1234 թ.: Չկայ Քրիստոնեայ կամ ոչ Քրիստոնեայ ազգ, որ պատերազմի մէջ գոհուած իր անձերին եկեղեցական սուրբերի կարգը դասի: Այդ օրինակին հետեւելով, Հայոց եկեղեցին մասնաւոր յիշատակութեան օրեր է նշանակել իր օրացոյցի մէջ, ինչպէս՝ Սարգարապատի, Ապրիլեան Եղեռնի, Հայրենական Մեծ Պատերազմի եւ 1988 թ. մեծ երկրաշարժի գոհերի համար: Հե-

ղինակը բոլորովին սխալ է իր այն տեսակէտի մէջ, որ «Գուցէ Հայ եկեղեցին կողմէ տրուած [սրբացման] որոշում մը կը նպաստէ նաեւ Հայոց Յեղասպանութեան վերջնական ճանաչումին եւ պահանջատիրութեան արդար լուծումին»: Ընդհակառակը, եղեռնի գոհերի սրբացումը չաղթանակը կը լինի թրքական հերքումին ցեղասպանութեան՝ հաստատելով նրանց բռնած դիրքը, որ ցեղասպանութիւնը հետեւանքն էր հայ համայնքների անհնազանդութեան եւ անհաւատարմութեան՝ թրքական իշխանութեան նկատմամբ: Հրեայ ազգը Երկրորդ Համաշխարհային Պատերազմի գոհերին չի դասել սրբերի կարգը հենց այդ պատճառով: Եղեռնի գոհերի սրբադասումը կը գրկի թրքական դաժան արարքն իր քաղաքական նշանակութիւնից:

Գրիգոր եւ Մովսէս Տաթևացիները անցել է վեց դար եւ հայ եկեղեցին ոչ մէկին արժանի չի տեսել սրբացնելու: Այս բացը ինչ-

պէ՞ս պէտք է բացատրել հայ եկեղեցու հաւատացեալին եւ մեր միւս քոյր եկեղեցական համայնքներին: Լուսահոգի Շնորհք Պատրիարք Գալուստեանն իր «Հայագի Սուրբեր» գրքի մէջ գրում է. «Եկեղեցի մը, որ դադրած է սուրբեր երկնէլէ, կորսուեցած է իր գերագոյն նպատակը. դարձած է ամուլ. դարձած է անպտուղ եւ հետեւաբար ոչ ոք թող զարմանայ, եթէ օրին մէկը իր վրայ հրաւիրէ անպտուղ թզենիին դատաւճիռը. «Կտրէ զայն, ինչո՞ւ երկիրը կը խափանէ»: Դրա համար Սուրբ էջմիածնի միաբան Գալուստ Տէր Մկրտչեանի առաջնորդութեամբ Հ. Մանանդեանը եւ Հ. Աճառեանը ձեռնարկեցին հաւաքել հայ նահատակների վկայաբանութիւններն իրենց «Հայոց Նոր Վկաները (1155-1843) (Վաղարշապատ, 1903 թ.) հատորը: Այսօր Հայ եկեղեցու սրբադասման հարցով զբաղուող աստուածաբանների պար-

Շար.ք էջ 19

Come celebrate

# Valentine's Day

at **The Stage**  
**Mediterranean Fusion Restaurant**  
546 S. Fernando Blvd., Burbank, CA 91502

**Friday, February 14, 2014**  
at 7:30 in the evening

*Fantastic Food*  
*Great Entertainment*  
*Lovely Atmosphere*

**Donation \$50**  
For reservations call  
Lena (818) 395-7967

### ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ ՈՒ ՆՐԱ ԿԱՍՔԻ ՈԳԻՆ

«Ու՞մ է հարկաւոր այն լեզուն, որ ազգի գաւակնեքին չի հասցնելու պատմութեան մնայուն արժէքները: Ու՞մ է հարկաւոր այն ոգին, որ սոսկ որպէս մի գանգալ է հնչելու ի լուր իր գոյութեան, եթէ ամէն մի նոր սերունդ չի ներդրում կուրծքովու նախնիներին»:

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՔՈՎԵԱՆ

#### ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿԼԱԳԻՍԵԱՆ

Ձեզ պատահե՞լ է արդեօք, երկաթուղու կայարան ուշացած ժամանելուն, երբ շարժակազմի փոխադրակառքերի անիւները արդէն սկսել էին պտտուել եւ ամբողջ շարժակազմը թափ առնում: Վազում էին փոխադրակառքերը, վազում էիր նրանց ընթացքի հետ, կառչելու մէկի աստիճանի բռնակին՝ նրա հարթակին բարձրանալու:

Ուշացե՞լ ենք հիմա էլ: Չէ՞, այնքան էլ ուշ չէ...: Հայկ Նահապետի զարմից Արմէն-հայերը, իրենց պատմութեան ընթացքին, բազում անգամներ են վազել իրենց կրակի, հրաբուխների արարչական լեռնաշխարհից հեռուներ, հասել մոլորակի բոլոր ազգերի երկրներին: Նրանց ծովեր չեն թափել, համոզուել, որ արարելու կամքի ու ոգու հուր են վառում իրենց երկրներ, Արմէն-հայու տաղանդից յառնած լոյսի հեղեղ հոսում իրենց մշակույթներին: Թէեւ մոռացան-չմոռացան իրենց դրախտավայր կրակի երկիրը ու աւանդութիւնները, մոռացան Աստուծոյ հետ խօսելու իրենց ոսկեղնիկ լեզուն... սակայն ասացին Հայ են, յետոյ էլ «ծագումով Հայ» են:

Չեմ ուզում մանրամասնել, պատճառաբանել Արմէն-հայերի վազքը իրենց արարչական երկրից եւ առանձին երկրներում իրենց «ծագումով Հայ» յորջորջուելուն: Ամենայնդէպ վայել է Հայ Հայկ ու Արամ Նահապետների զարմից ու յիշատակութեան արժանի բազում քաջ գործեր կատարած Արմէն-հայ ցեղին, իրենց հոգիներում մարել վահագնի կուռի ու յաղթանակի ոգու կրակը, առանց կուռի լքել իրենց կրակի երկիր լեռնաշխարհը եւ հիմա էլ աշխարհով մէկ ողբալ, որ սպաննել են իրենց, աղաչել նրանց որ ճանաչեն իրենց ցեղին սպանութիւնը: Աշխարհի մարդիկ քաջերին են սիրում...:

Ուշացե՞լ ենք, չէ՞, շատ ուշ չէ: Ես այս գիրը գրեցի Յունուարի 22-ին Հայաստանի Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան թեմի Գերաշնորհ Սրբազան Յովնան Տէր-տէրեանի հովանաւորութեամբ Առաջնորդարանում մտաւորակալութեան ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպումը՝ թիկունք կենալու հայ գրողներուն ու մտաւորականութեանը, եւ ստեղծուած «Գործադիր Յանձնախումբի» միջոցով պատշաճ ուշադրութեան արժանացնելու հայ գրողի ու մտաւորականի ծառայութիւնը հայ մշակույթին: Առաւելապէս միջինից աւելի բարձր տարիքի բազում մտաւորականներ էին եկել մասնակցելու հանդիպմանը: Այդ մտաւորականների ու «Հայ Եկեղեցու» միասնական ջանքերով շրջանում հայ մշակույթի զարգացման ու հայապահպանման վերաբերեալ հարցերի քննարկում էր եղել: Հանդիպման ատեն այդ նպատակի իրականացման համար բազում առաջարկութիւններ էին եղել: Չէ, ուշ չէ, մտաւորականութիւնը, Հայ Առաքելական Եկեղեցւոյ մեծ խնդիրներ ունեն, հայուն այստեղ իր մշակույթով «Հայ» պահելու եւ նրանց

պահի հրամայականով «երկիր» տանելու:

Այս «նոր երկրում» էլ հարուր եւ աւելի տարիներ առաջ շատ Արմէն-հայեր եկան, գերակշիռ մասը իրենց լեռնաշխարհի շէնքերի աշխատաւոր մարդիկ էին: Շատեր հասան Խաղաղ Ովկիանոսի ափեր, մասնաւորապէս Ֆրէզնոյի շրջան: Ընդարձակ դաշտավայր էր, յարմար երկրագործութիւն անելու: Այնտեղ բնակութիւն հաստատած մարդիկ հազար անարգալից մակդիրներով որակեցին նրանց: Ո՞րտեղից իմանային, որ նրանց արարչական լեռնաշխարհում էին առաջին անգամ հող մշակել, երկրագործութիւն արարել, իրենց մայրացրած հողը բարիքով էր լցրել երկիրը: Բազմացել էին, այնտեղից գնացել Հնդկաստանից մինչեւ Ատլանտի ծովի ափերու Սպանիայից մինչեւ Պոնտոս: Նոր բնակած երկրներում իրենց հետ տարած երկրագործութեան հմտութեան կիրառումը՝ աշխարհի քաղաքակրթութեան զարգացման սկիզբն եղեւ, այդպէս են վկայում պատմաբանները: Արմէն-հայ մարդիկ իրենց արարումով պիտի ստիպէին տեղաբնակներին իրենց հանդէպ ակնածանքով վերաբերուել: Իրենց լեռնաշխարհում բուսած խաղողի որթատունկերի շիւեր էին բերել իրենց հետ, այն տուին հողին եւ մէկ-երկու տարի յետոյ տեղաբնակները «կրակի» համով խաղող պիտի համտեսէին, նրանցից քամուած հիւթը հնձաններում պիտի պոթկար, աստուածների ըմպելիք պիտի լինէր, խրախճանքի ոգու արբեցում պիտի հոսէր նրանց հոգիներին: Երկրի նախագահները նրանց շրջանը ժամանելուց, նախ նրանց ազարակները պիտի այցելէին, որոնք հազար գովքի խօսքեր էին արել նրանց արարումներին: Հաստատ որ չձուլուեցին, ազգանունները մնացին-չմնացին «եան», խօսում են Անգլերէն, սակայն ասում են Հայ կամ էլ «Հայ ծագումով» մարդիկ են, ուրիշ լեզուով խօսող հայերն էլ ՀԱՅ են, իսլամացած ու թրքախօս ծագումով «Հայ»-ն էլ Հայ է: Գնալ նրանց մօտ, բերել նրանց «Հայութեան» գիրկը: Սակայն այդ Ֆրէզնոյի հայերի Արմէնակի զարմից ծնունդի մի մանչ, հսկայ ոչ միայն մարմնով, այլ նաեւ տաղանդով, ճակատը Հայկական բարձրաւանդակի չափ լայն, ակները Տուշպուէա ու Գեղամայ ծովերի նման վճիտ: Աշխարհին սփռեց իր ցեղի ոգին, աշխարհին ասաց ես Հայ եմ, գրում են Անգլերէն, սակայն Հայ գրող եմ: Ահա այդպէս...:

Ասում են ձուլուել ենք, չէ՞, չենք ձուլուել... Եւրոպայի ու աշխարհի բոլոր երկրամասերում եղել են ու կան բազում Հայ մարդկանց գաղթածախներ: Մայրենի լեզուն չբարբառող մարդիկ չեն ասում այդ ազգի ցեղից են, ծագումով հայ են, սակայն հայ են, նրանցից յառնած բազում հանձարեղ մարդիկ համամարդկային մշակույթի ջրհերի լոյս են վառել այնտեղ, իրենց ցեղի փառքի պատիւը բարձր պահել: Թուրքի գաւթած Հայքերի իսլամացած հայեր, հիմա իրենց հայու ոգու դրօշները վեր պահած...

ասում են Հայ ենք: Հազար տարիների Եւրոպայի բազում հայեր հիմա ասում են Հայ ենք, ծագումով Հայ ենք: Ահա այդպէս...:

Հանդիպման նպատակներից էր մտաւորականների ու գրողների հովանաւորումը եւ դերի կարեւորումը ու նրա ուղղորդումը շրջանի մշակութային կեանքում: Մտաւորական-մտաւորականութիւն՝ մասնագիտորէն գուտ մտաւոր աշխատանքով զբաղուող մարդկանց հասարակական խառն է: Քալիֆորնիա, շատ-շատ մտաւորականներ կան նախկին սերունդների զարմից, նաեւ Մերձաւոր Արեւելքի երկրներից ու մասնաւորապէս Հայաստանից աւելի ուշ ժամանակների գաղթածներ: Ընկերային հարցերը հոգալու համար նրանցից շատեր վարձու աշխատանքով են զբաղուած, իսկ մի մասն էլ ընդգրկուած զանազան մշակութային ու հայրենակցական միութիւններում:

Չէ՞, ուշ չէ... մի մթազնէք մարդկանց մտքերը, ասում ենք Հայաստան պետութիւն ունենք, ուր որ լինելու ենք ասելու ենք Հայ ենք, ծագումով Հայ ենք, մանաւանդ երբ մեր սրտերից չենք վանել Հայկ Նահապետին ու մեր հոգիներում ծին դարձած Հայ Առաքելական Եկեղեցւոյ հաւատքը: Շատ ընկերային միութիւններ, հայրենակցական միութիւններ կան, որոնք գլխաւորապէս հայախօս են, յաճախակի հանդիպումներ կազմակերպում, չիշում «էրկիրը», երգում Հայերէն: Կան նրանք:

Մտաւորականները գլխաւորում են Հայկական Մամուլը: Անբաղձալի է նրանց ֆինանսական վիճակը: Նուազում է նրանց ծաւալը, քչանում են յօդուածագիրները, քչանում են ընթերցողները, որոնց մի մասին հրապուրելու համար Անգլերէն լեզուով էջեր են հրատարակում: Ընթերցող հրապուրելու նպատակով մի շարք լրագրեր եւ նրանց առանձին օրերի հրատարակուած-

ները անվճար են բաշխում: Չկա՞ն, թէ քի՞չ են հովանաւորները...: Ամէն տարի, Ղարաբաղի տնտեսական ու ընկերային զարգացման համար դրամահաւաք է կազմակերպւում: Կարեւոր է Ղարաբաղը, երկիր ենք բերել գերուած զաւակին, սակայն կայ նաեւ աշխարհով սփռուած Հայ, որոնք իրենց էթնոսի գոյատեւման համար ֆինանսական օգնութեան կարիք ունեն: Ինչո՞ւ չի կարելի իրենց իսկ հանգանակած միջոցներից, իրենց իսկ մշակութային, եւ մամուլի կարիքների համար մասնաբաժին տրամադրել: Մամուլը որպէս գոյատեւման հզօր ազդակ, հրամայական է հզօրանալու, հայագիտական, ազգային, գրական ու պատմահայրենասիրական հրապարակումները յաճախականացնելու, որ Հայ մարդու հոգին լցուի ցեղին լոյսի հեղեղով:

Գրողներ, մտաւորականութեան առաջապահ մարտիկները, որոնք վահագնի եղէզան ցուպը վեր պահած, իրենց մտքերից ճառագած լոյսի բոցերն են հոսում Արմէն-հայերի սրտերին: Իրենց արարումները՝ ազգի-ցեղի մշակույթ են ստեղծել: Մշակույթը հասարակութեան եւ մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որը բնութագրում է նրանց գործունէութեան առանձնատուկ եղանակների զարգացումը, որոնցից գեղարուեստական մշակույթը կեանքի հոգեւոր ոլորտին է առնչւում: Գրողներն են ցեղին տանում սիրանքների, նրանց հոգիներին հոսում ցեղի աւանդապատմութեանը, նախնիների քաջ գործերի պատմութեանը ու ցեղի զարմի գոյատեւման դրօշը վեր պահած ազգին տանում յաւերժութեան ճամբաներով: Ամերիկայի Միացեալ Նահանգներում կայ Գրողների Միութիւն, ուր կան բազմաթիւ մտաւորականներ ու շնորհալի գրողներ: Գրողների միութիւնը իր

Շաբ.ը էջ 19

AS PART OF A SERIES OF EVENTS COMMEMORATING THE 99TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE  
 BROADCAST VERSION SCREENING OF  
**ORPHANS OF THE GENOCIDE**  
 Regional Emmy Award Nominated Documentary

Hosted by  
**Organization of Istanbul Armenians**

PRESENTED BY  
 FOUR-TIME REGIONAL EMMY® AWARD WINNER  
 BARED MARONIAN

Wednesday, February 5th, 2014  
 8:00pm  
 Krikor & Aved Kurkcuoglu Hall  
 19726 Sherman Way  
 Winnetka, CA 91306

UNSPOKEN HUMAN RIGHTS FILM FESTIVAL 2013  
 AUDIENCE CHOICE AWARD POMEGRANATE FILM FESTIVAL TORONTO 2013

Free Admission  
 Tax-Deductible Donations are Strongly Encouraged  
 All Proceeds Will Be Used for the Promotion of This Project  
 For More Information Call Dr. Ohannes Kulak Avedikyan  
 818-800-1976 - 818-342-0110

# ՀԱՆՃԱՐ՝ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ՍԵՐԿԷՅ ՓԱՐԱՃԱՆՈՎ

«Սիճնմայի տաճարին մէջ կերպարներ կան, լոյս եւ իրականութիւն, իսկ Սերկէյ Փարաճանովը այդ տաճարի Վարպետն է»:

Ժան Լուի Կոտար

## ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ

«Հայ մարդ, որ ծնած է թիֆլիս եւ ռուսական բանտ դրուած է ու քրանական ազգայնական կոչեցրու համար» - յաճախ այսպէս կը բնութագրեն 20-րդ դարու ֆիլմի խոշորագոյն բեմադրիչներէն Սերկէյ Փարաճանովը:

Ծնած է 1924-ին, Թիֆլիս: Հետեւած է տեղի երաժշտանոցի ջութակի եւ ձայնի բաժիններու դասընթացներուն: Շրջանաւարտ եղած է Սինեմատիկոգրաֆի համամիութենական ինստիտուտի բեմադրական բաժինէն: Ֆիլմարուեստի մէջ իր առաջին յաջողութիւնը կարելի է համարել "Մոռցուած նախնիներու ստուերները" (1964) ֆիլմը: Գեղջկական միջավայրի իւրօրինակ ներկայացման շնորհիւ, այս գործը բազմաթիւ մրցանակներ շահեցաւ:

Որպէս փարաճանովեան գեղարուեստական ձեռագիրի եւ միայն իրեն յատուկ նորարարական ոճի դրսեւորում, որ լայն հռչակ բերաւ մեր մեծ հայրենակիցին՝ "Նուան գոյնը" ֆիլմն է (1968), որ խորհրդանշաններու բազմամասո ու հետաքրքրական մեկնաբանութիւններով Սայեաթ-Նովայի կեանքը կը ներկայացնէ:

Փարաճանովի ստեղծագործական գործունէութիւնը դարձեցաւ 1973 թուականի Դեկտեմբեր 17-ին, երբ արուստուութեան մեղադրանքով գինք դատապարտեցին հինգ տարուան բանտարկութեան: Միայն չորս տարի ետք, ֆրանսացի յայտնի սիւրուէալիսթ Տայլի մտերիմ ընկեր ու անուանի բանաստեղծ Լուի Արակոնի միջամտութեան շնորհիւ, ան ազատ արձակուեցաւ:

"Ես վրէժ կը լուծեմ սիրով" ըսած է հանճարեղ արուեստագէտը: Իսկապէս ալ, այս խօսքերը լաւագոյնս կը ներկայացնեն Փարաճանով մարդն ու արարողը:

Միայն Փարաճանով հայը կրնար իր ծինով, խորունկ արմատներով եւ ապրած տառապանքով փնտռել ու գտնել երեւակայութիւնը, հաւատքը եւ ապրումները արտայայտելու բազմաթիւ նոր ձեւեր ու միջոցներ: Անոր փորձարարական ջիղը, անսպառ երեւակայութիւնն ու բնատուր շնորհքը հրաշալի դրսեւորում գտած են իր քոլաժներուն մէջ, որոնք արդիապաշտ արուեստի նորութիւններ եղան: Այդ քոլաժներուն մէջ ան օգտագործած է ապակի, ճենապակի, չորցուած բոյսեր, կտորներ, թաւիչ կտորներ, տիկնիկներ, ժանեակներ... անոնցմէ մէկուն մէջ ան շատ ինքնատիպ մեկնաբանած է Մոնա Լիզայի կերպարը:

Փարաճանովը սիրած է նուազ, նուազ գինին, հողէն ծնած բարիքները եւ սիրահարն էր բնութեան կատարելութեան: Մարդ-թատրոն, մարդ-տօն...: Ուր որ եղած է Փարաճանովը, տան մէջ, թէ տունէն դուրս, մագնիսի պէս դէպի իր կողմը քաշած է ծանօթ ու անծանօթ մարդիկը եւ բոլորին քոլաժ

ներ, նկարներ, թանկարժէք իրեր, ճեպանկարներ նուիրած է: Վստահ ենք, որ երբեք կարելի պիտի չըլլայ ի մի բերել փարաճանովեան բոլոր մասունքները: Գուցէ պէ՛տք ալ չէ: Այդ մասունքները հազարապատիկ կ'արժեւորուին, երբ կը յայտնուին միջազգային յայտնի աճուրդներու մէջ, ձեռքէ ձեռք կ'անցնին ու բազմազգ աշխարհի տարբեր ներկայացուցիչներ կը ճանչնան ու կը գնահատեն հայ հանճարը:

Երեւանի մէջ Փարաճանովի յարկին տակ շապիկ մը կայ ցուցադրուած: Փարաճանովեան դրոշմը կրող այդ շապիկը երեսուն եւ ասելի տարիներ պահուած էր Նիւ Եորք բանակ եղբայրներ Գազիկ եւ Յովիկ Դիլլաքեաններու տան մէջ: Ճերմակ կտորի վրայ Վարպետը Արարատը պատկերած է, հայ-թուրքական սահմանը՝ փշալարով, կաթողիկոսն ու հայ ժողովուրդը: Նկարուած կտորին հակառակ կողմը՝ դարձերեսին, գրիչով իր ձեռքին ափը նկարած ու վրան գրած է. "Նկարած է Սարգիս Փարաճանովը Յովիկին համար":

Փարաճանովը նկարազարդ հովանոցներ կը դրկէր Սականին, Ֆելլինիին:

"Քոլաժներս խտացուած ֆիլմերն են", - կը սիրէր կրկնել ան եւ արուեստի այդ ձեւի իրագործումը, ինչպէս նաեւ հետագայ զարգացումը մենք պարտական ենք կալանաւոր Փարաճանովին: Ճաղերու ետին ան այդպէս կը ցած է յազուրդ տալ իր ստեղծագործական կիրքին:

Անշուք ու անձեւ կտորի պատառիկ մը, էջ մը թուղթ, մաշած գլխարկ մը կամ հովանոց մը անոր ձեռքերուն մէջ վերածուած են արուեստի գլուխգործոցներու:

Ձեռքի տակ շատ սահմանափակ նիւթեր ունենալով՝ բանտին մէջ ան բաւարարուած է ամսագրերու էջերէն կտրատուած-հանուած նկարներով, չորցած ծաղիկներով:

Անգամ մը քոլաժներու ցուցահանդէսի առթիւ ան ըսած է. «Ես արհեստավարժ չեմ եւ չեմ ալ հաւակնիր ըլլալ: Իմ ցուցահանդէսս ոչ թէ հոպի, այլ մասնագիտական անհրաժեշտութիւն է: Ես բեմադրիչ եմ, աշակերտած եմ մեծ վարպետներ Սովէնքոյին ու Տովթենքոյին, անոնք երկուքն ալ կը նկարէին, էջգենշթէյնն ալ կը նկարէր, ակամայ ես ալ սկսայ նկարել, նաեւ քոլաժներ ընել: Շատ պիտի ուզէի, որ ցուցահանդէս այցելեն երեխաները, որովհետեւ հասած է գեղեցիկը որոնելու, գտնելու եւ իրականացնելու ժամանակը, մեզ շրջապատող գեղեցիկը՝ մեր լեռները, երկինքը», - փարաճանովեան այս պատգամը հասցեագրուած է սերունդներուն՝ գեղեցիկը արժեւորելու եւ գնահատելու անկեղծ կոչով: Տուրք տալով ամէն ինչի բնականին ու միշտ հետամուտ բնականին՝ ան բնութիւնը կը նկատէր գեղեցիկին ու կատարելին ակունքը: «Հրաշքը բնութեան մէջ է», - հանճարը խոնարհած է

արուեստներու արուեստ բնութեան առջեւ ու հաստատած, որ ինք բնութեան օգնութեամբ կը վերցնէ, կը վաւերացնէ ու կը ստեղծէ շարժուն ճկունութիւնը:

Փարաճանովեան արուեստը կը սաւառնի բնական ու իրաւ զգացումներու, հոգեվիճակներու տիրոջին մէջ: Մարդիկ խորհրդաւոր, խորախորհուրդ ու առեղծուածային շերտեր կը փնտռեն Փարաճանովի ֆիլմերուն մէջ, մինչդեռ այդ ֆիլմերը մարդու ու մարդկայինի մասին են: Պարզ ու թափանցիկ նրբագիծերով ան ստեղծած է ֆիլմ-խճանկարներ, որոնք ճկունութեան, շարժումի, երբեմն նաեւ անշարժութեան ու լուսութեան համակցութեամբ մեր մտահորիզոնին կը խարսխեն մեր իսկ պատմութիւնը: Փարաճանով անուներ մեր այցեւորման է: Անոր արուեստը լայն զանգուածներուն համար չէ: Այն գեղագիտութիւնը, փիլիսոփայութիւնը, գեղարուեստը, բեմադրման տարօրինակութիւնը, պատկերային խճանկարը, ըսելիքի խո-

րութիւնն ու պարզութիւնը, որ ամփոփուած կը գտնենք իր ֆիլմերուն եւ քոլաժներուն մէջ, համաշխարհային արուեստի հատընտիր է:

«Ես արուեստասէր եմ ու բեմադրիչ: ...Ընդհանուր թիւով 60 ոսկէ մետալ ստացած եմ: Իսկ ինչո՞ւ համար: Ճաշակիւս նաեւ այն բանի համար, որ կը յաջողիմ ճկունութիւն արտայայտել», - ըսած է Վարպետը: Փարաճանովեան ճաշակին կ'ընկերակցին համաշխարհային վարպետներ՝ Փագոլինին, Անթոնիոնին, Ֆելլինիին, Սականը, Փրֆաստն, Սալվատոր Տալին: Իսկ իրեն՝ Վարպետին, ամենաստվորական մարդիկ ուղեկցած են միշտ. ան բոլորին վերաբերած է ակնածանքով, մեծարանքով, բոլորին օրը տօն ու հանդիսութիւն դարձնելու ձգտումով: Ատով ալ ան մեծ է, հանճարեղ ու ընդգրկուն:

Ծնած է ձմրան ցուրտ օր մը՝ Յունուար 9-ին, մահացած է ամրան տօթակէզ օր մը՝ Յունիս 20-ին: Իսկ այդ ընթացքին՝ համատարած գարուն էր:



### ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ

#### Կը ներկայացնէ

Հայոց Ցեղասպանութեան 99ամեակի գործունէութիւնեանց շարքին

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

## «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐԸ»

(Անգլերէն ենթավերնագրերով)

Վաւերագրական ֆիլմերու բեմադրիչ՝

### ՏԻԱՐ ՊԱՐԷՏ ՄԱՐՈՆԵԱՆԻ պատրաստութեամբ

Չորեքշաբթի, Փետրուար 5, 2014,

գիշերը ժամը 8:00ին

Միութեան կեդրոնին մէջ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել

Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800-1976 (cell)

Պոլսահայ Միութեան գրասենեակը (818) 342-0110

Մուտքը՝ ազատ





### ԻՆՉՊԵՍ ԳՐԱԻԵԼ ՏՂԱՍԱՐԴՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Խորհուրդներ, որոնք կ'օգնեն գրաւելու տղամարդոց ուշադրութիւնն ու արժանանալու անոնց համակրանքին:


- Սորվեցէք ժեստերու լեզուն: Ոչ ոք ձեզմէ կը պահանջէ կատարել հնդկական պարային բարդ շարժումներ, բայց շարք մը ժեստեր, գորս կանայք կը կիրառեն դարերէ ի վեր, աւելի պերճախօս պիտի ըլլան, քան ամենամեծ խոստովանութիւնները: Անհատական կը թուի, բայց քիչ մը թեքուած գլուխը, կիսաբաց շուրթերը կամ ալ ձեռքի հեզակուն շարժումը՝ անտրուածքը ուղղելու նպատակով, ազդակ կը հանդիսանան շրջապատի մէջ գտնուող բոլոր տղամարդոց համար, ի դէմ, անոնք չեն կրնար բացատրել, թէ յատկապէս ի՞նչը գրաւած է իրենց ուշադրութիւնը:

### ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ


Լաւատեսութիւնը ի՞նչ կրնայ ընել

Երբ կը հիւանդանանք, բժիշկի կ'երթանք, բայց շատ յաճախ ալ ոչինչ կը ձեռնարկենք՝ մտածելով, որ ինքն իրեն կ'անցնի (հայկական բնաւորութիւն է): Ժիշդ է, մեր մարմինը ինքնավերականգնող ամբողջութիւն է, բայց անոր մենք կրնանք օգնել... Լաւատեսութեամբ: Լաւատեսորէն նայելով կեանքին՝ մենք կրնանք, նոյնիսկ չնկատելով, յաղթել շատ հիւանդութիւններու: Նման եզրակացութեան հասած են մասնագէտները՝ հետազոտութիւններու իբրեւ արդիւնք: Եթէ ընտանիքին մէջ օրինակ՝ հակուածութիւն կայ սրտանօթային հիւանդութիւններու հանդէպ, ուստի լաւատեսին մօտ այդ հիւանդութիւններէն որեւէ մէկով հիւանդանալու վտանգը երկու անգամ կը նուազի: Ուրեմն՝ լաւատեսութիւնը ամենալաւ դեղն է:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծաշուքներու եւ մանուկներու Բարբառային բաժնով:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդոցի եւ մկանային ցտեղի:  
Բացառապէս վերջին հետազոտութիւններով պատշաճ վնասութիւններու բաժնով:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
Updated Every Friday

### ՏՐԱՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՍԱՐ ՈՃԱԲԱՆՆԵՐԸ ԻՆՉ ԽՈՐՀՈՒՐԴ ԿՈՒ ՏԱՆ

Ոճաբաններ խորհուրդ կու տան յաճախակիօրէն փոխել անտրուածքը: Ամենատարածուած ձեւը մազերը ներկելն է: Ուշադրութեան կեդրոնին յայտնուելու համար պէտք է արմատական փոփոխութիւններ ընել թէ՛ գոյնի եւ թէ՛ օրինակ՝ ճակատի մազափունջի ձեւի ու երկարութեան հարցով, որ կարելի է բոլոր տարիքի մարդոց եւ բոլոր անտրուածքներու պարագային: Գլխաւորը համապատասխան ձեւը գտնելն է:

Մուտ գոյնով ներկուած մազերը այնքան լաւ չեն փայլիր, որքան բաց գոյնի մազերը: Այդ պատճառով խորհուրդ կը տրուի օգտագործել փայլք տուող միջոցներ: Ոճաբանները խորհուրդ չեն տար անվերապահօրէն տեղաւորուել նորաձեւութեան թելադրած շրջանակներուն մէջ: Միաժամանակ կարելի է ձանձարալիօրէն անփոփոխ մնալ, այդ պատճառով անհրաժեշտ է փորձել կարծ եւ երկար անտրուածքներու տարբեր մէկը միւսին հետ օգտագործել, հետաքրքրական լրացումներ գտնել, հմտօրէն օգտագործել նաեւ կեղծ ծամերը:

### ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

Տուրմը կ'օգնէ խուսափելու կնճիռներէն վերջին հետազոտութիւններու համաձայն՝ մուգ գոյնով տուրմի ամէնօրեայ օգտագործումը կը կանխարգիլէ կնճիռներու յառաջացումը: Մեծն Բրիտանիոյ "European Dermatology London"-ի մասնագէտները բացայայտած են, որ տուրմի ոչ մեծ քանակութիւնը մաշկը կը պաշտպանէ արեւու անդրամանիշակագոյն ճառագայթներու վնասակար ազդեցութեանն եւ կը նուազեցնէ մաշկի կնճիռներու յառաջացման հաւանականութիւնը: Հետազոտութեան հեղինակները կը պնդեն, որ այդպիսի օգտակար յատկութեամբ օժտուած է միայն մուգ գոյնով տուրմը, որ հարուստ է անթիօքսիտանոններով:

Տուրմի արդիւնաւէտ յատկութիւններուն մասին կը յայտարարեն նաեւ Օքսֆորտի համալսարանի ու Հալլ եւ Եորք բժշկական կեդրոնի մասնագէտները, որոնք կը պնդեն, որ տուրմի օգտագործումը կը կանխարգիլէ սրտանօթային հիւանդութիւններու յառաջացումը, ինչպէս նաեւ կ'օգնէ պայքարելու յղզածութեան դէմ եւ կը լաւացնէ չիշողութիւնը:

Զիդերու մասնագէտները պարզած են, որ տուրմի օգտագործումը կենդանիներու եւ մարդոց մարմնին մէջ կը նպաստէ ուղեղի վրայ ազդող բնական ցաւազրկող խմորներու յառաջացման:

### ՖԻԶԻԲԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ ՏՂԱՍԱՐԴՈՒՑ ՀԱՍԱՐ ԱՌԱԻԵԼ ԿԱՐԵՒՐ Է, ԲԱՆ՝ ԿԱՆԱՆՑ

Ընկերաբանները պարզած են, թէ տղամարդիկ եւ կանայք ամենաշատը ինչ կը գնահատեն եւ կարեւոր կը համարեն հակառակ սեռի հետ յարաբերութիւններուն մէջ: Հետազոտութիւններուն արդիւնքները գարմացած են փորձագէտները:

Կը պարզուի, որ եթէ տղամարդն ու կինը սէր կը փնտռեն, աւելի շատ ընկերութեան յոյս կ'ունենան: Զուգընկերով հետ ընկերական յարաբերութիւնները առաջնային են, եթէ հետազոտին պէտք է ուսման թիկ յարաբերութիւններ հաստատուին: Որպէսզի յարաբերութիւնները երկարատեւ ըլլան, անհրաժեշտ է, որ գոյգի մէջ կայծ յառաջանայ. այդ կարծիքը ունին թէ՛ տղամարդիկ, թէ՛ կանայք: Նաեւ կարեւոր է, որ երկրորդ կէսը ըլլայ անհատականութիւն, ինչպէս նաեւ ցուցաբերէ բարութիւն եւ ըլլայ ըմբռնող: Ինչ կը վերաբերի ֆիզիքական մերձեցման, ուստի անիկա տղամարդոց համար առաւել կարեւոր է, քան կանանց: Կարեւոր կէտերէն են նաեւ դրամ շահելու կարողութիւնը, կրօնական հայեացքներն ու կրթութիւնը:

### ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԻՐԿԸ ԻՅՆԱԼԸ ՄԱՐԴՈՒ ՄՕՏ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՅԱՐՄԱՐԱԻՏՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄ ԿԸ ՅԱՌԱՋԱՅՆԷ

Երկար ժամանակ չիշողութիւններու գիրկը իջնալը գնահատուած է իբրեւ փախուստ ներկայէն եւ իբրեւ անհանգստութեան դրսևորում ապագայի հանդէպ: Սակայն, ուսումնասիրութիւններու իբրեւ արդիւնք պարզուած է, որ անիկա կապուած է ոչ միայն անցեալի հետ, այլեւ՝ ապագայի: Յիշողութիւններու գիրկը կ'իջնան միշտ եւ բոլորը, անիկա մարդուն կը պարզեւէ հոգեբանական շարմարաւէտութեան զգացում: Օրինակ, ըստ մասնագէտներու, այդ կերպով կարելի է պայքարիլ առանձնութեան դէմ: Յիշողութիւններու գիրկը իջնալը հասարակական մեկուսացում չի յառաջացնէր: Ընդհակառակը, անիկա կը նպաստէ հասարակական աւելի ամուր կապերու հաստատման, կ'աւելցնէ ինքնագնահատականն ու լաւատեսութիւնը: Հաւանաբար, անցեալի չիշողութիւնները կ'օգնեն պաշտպանելու սեփական նշանակութեան զգացումը եւ աւելի լաւատեսական հայեացք կու տան ապագային:



**SEROP'S CAFE**  
GREEK & LEBANESE FOOD  
SERVING BATON ROUGE SINCE 1979





### ՀՆՉԱԿԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍ ՍԱՐԳԻՍ ՏԽՐՈՒՆԻԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 85-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Շարունակում է 13-ին

Թեան անունով խօսք արտասանեց Ընկ. Տիրգրան Միհրանեան: Ան ըսաւ. «Յարգելի Առաքեալ Հնչակեան Կուսակցութեան, 85 տարիներ առաջ հայ դաւադիր ոճրագործը քեզ զգեստեց առ ի հետեւանք քու վայելած մեծ ժողովրդականութեանդ:

Դուն Սուրիայէն մինչեւ Լիբանան եղած էիր առաքեալը հայ ժողովուրդին, ուսուցիչը, հետտորը եւ տիպարը Մեծն Փարամազին:

Վատը գինեց եղբայրասպան ձեռքը, եւ եթէ ան չհրաժարեցաւ իր վատութենէն, ճշմարտախօսն ալ չհրաժարեցաւ իր առաքելութենէն: Չհրաժարեցաւ... որովհետեւ մահ չկայ ճշմարտութեան ու ճշմարտախօսին համար: Այցելելով դամբարանդ կը ներշնչուինք բոլոր այս բարեմասնութիւններով որոնք քեզ դարձուցած էին սիրելին քու ժողովուրդիդ, համակիրներուդ ու քեզ լսող ու ճանչցողներուն: Տխուր մահդ ցաւ պատճառեց բոլորին:

Դուն կ'ապրիս ու պիտի ապրիս յաւիտեան: Բոլոր սերունդներուն յաջորդական Տիրուհիական անշէջ հուրով:

Յիշատակդ պիտի պահենք որպէս հաւատք եւ սկզբունք մեզի:

Կեցցե՛ն յիշատակդ միշտ յարգող Տիրուհիականները: Կեցցե՛՛ Փառապանծ Հնչակեան Մայր Կուսակցութիւնը»: Ապա օրուան պատգամաբերը, Ս.Գ.Ն.Կ. Լիբանանի Շրջանի վարիչ մարմնոց անդամ եւ Տ.Ո.Ե.Մ. դիւանապետ Ընկ. Վանիկ Տազխեան կատարեց նահատակ Տիրուհի արժեւորումը եւ ըսաւ. «Երբ կը խօսինք Սարգիս Տիրուհիի մասին անպայման նահատակ եւ ուսուցիչ մակդիրները կը գործածենք առ ի յարգանք եւ մեծարանք: Նահատակը այն անձն է, որ իր կեանքը կը նուիրաբերէ յանուն մեծ նպատակին եւ անոր զոհողութիւնը չի չափուիր նիւթական ժամանակաւոր արժէքներու նուիրաբերումով, որովհետեւ նահատակինը գերագոյն զոհողութիւն է:

Սարգիս Տիրուհին իր կեանքը նուիրեց Հայրենիքին, գաղափարի եւ մարդկութեան բազմաթիւ վրայ, միանալով Հնչակեան կուսակցութեան լուսապսակ նահատակներու անմահ փաղանգին:

Ան իրապէս արժանաւոր ուսուցիչ էր, իր թիրախը առաջին հերթին երիտասարդութիւնն էր եւ անոնց դաստիարակութիւնը ազգային եւ համամարդկային արժէքներով:

Նահատակ ուսուցիչ Սարգիս Տիրուհին, հասարակական կուսակցական անգուգական գործիչ մըն էր, իր փոքր տարիքին որբ մնալով համեստած էր ընչազրկութեան եւ ընկերային անարդարութեան լեզի թոյնի համը: Անձնական տառապանքին հետ մէկտեղ, ականատեսը դարձաւ իր հարազատ ազգին դէմ կատարուած ճնշումներուն եւ Յեղասպանութեան: Ան ոչ միայն տիպար հայ մըն էր, այլ կատարեալ մարդ, որովհետեւ իր պայքարը ուղղուած էր միայն հայ ժողովուրդի թշնամիներուն դէմ, այլ բոլոր կայսերապաշտական շահագործող եւ ազգերը գերի դարձնող ուժերուն դէմ: Ան քաջ գիտէր որ

ժողովուրդները իրարու թշնամի չեն ծնիր, այլ շահագործող դասակարգերը եւ ազգայնամուլական գաղափարներն են, որ ժողովուրդները կը թշնամացնեն իրարու եւ անմեղ զոհերու դիակներուն վրայ կը կուտակեն իրենց մեծ հարստութիւնները: Հետաքրքրական գուգադիպութեամբ մը երբ այսօր մենք այստեղ հաւաքուած անարգ փամփուշտներուն զոհ գացած ընկեր Սարգիս Տիրուհիին շիրմին վրայ խոնկ եւ մոմ կը վառենք, ճիշտ այս պահուս Պոլսոյ մէջ հազարաւոր մարդիկ կ'ուղղուին դէպի «Ակօս» թերթի խմբագրատուն յարգանքի տուրք տալու Սարգիս Տիրուհիի գաղափարներուն հաւատացած հայ ժողովուրդի ազնիւ գաւակ Հրանդ Տինքի յիշատակին:

Ճիշդ է որ Տիրուհիի դէմ գնդակ արձակողը հայու անունով եւ մակնունով անձ մըն էր, սակայն այն չէր ծառայէր ոչ հայուն ոչ ալ հայութեան դատին, այլ մաս կը կազմէր մարդու իրաւունքներու եւ ընկերային արդարութեան պահանջողներուն դէմ

տարուած անարգ պայքարի մէկ օղակին:

Այսօր Տիրուհիի նահատակութեան 85-րդ տարելիցին եկած ենք նորոգելու մեր ուխտը, եւ մեր հաւատարմութիւնը արտայայտելու միշտ երիտասարդ Սարգիս Տիրուհիին հաւատացած գաղափարներուն:

Նահատակ ընկերը սիրեց նաեւ այս տարածաշրջանը եւ անոր ժողովուրդը, որուն համար աքսորուեցաւ եւ կրեց բանտի տանջանքները: Մեր ապրած տարածաշրջանը այսօր կը գտնուի շատ վտանգաւոր հանգրուանի մը առջեւ: Ամէն կողմերէն չեն դադրիր սպառնալիքները եւ յատկապէս ծայրայեղական կրօնական այլամերժ հոսանքները, որոնք ամէնուրեք անհանդուրժողականութիւն եւ այլամերժութիւն եւ մահ կը տարածեն:

Այս երեւոյթին դիմաց որպէս Հնչակեան երիտասարդներ պէտք է ըլլանք զգոյշ եւ կառչինք համամարդկային արժէքներուն, մերժելով ամէն տեսակ հատուածականութիւն եւ ծայրայեղութիւն:

Անմահ նահատակ ընկեր Սարգիս Տիրուհի: Մենք դեռ

շատ պիտի գանք քեզի ծաղիկ բերելու:

Կեցցե՛՛ հայ ժողովուրդը Կեցցե՛՛ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը»: Ապա Տիրուհի Ուս. Երիտ. միութեան երէցական դիւանէն ընկերուհի Կարին Շորճեան ներկայացուց Սարգիս Տիրուհիի կենսագրական գիծերը, իսկ երիտասարդական դիւանէն Ընկ. Մկօ Քեթեմեան երգեց «Ախ Ֆետայի» երգը, որմէ ետք ուխտաւորները միասնաբար երգեցին «Պարծանք Քեզի» երգը՝ նուիրուած Սարգիս Տիրուհիին:

Նահատակ ընկերը յիշատակը յարգող բոլոր ընկեր-ընկերուհիները մոմեր գետեղեցին անոր դամբարանին վրայ: Յիշատակի հաւաքը փակուեցաւ ուխտի երգով, որմէ ետք Տիրուհիականները խոստացան իւրաքանչիւր տարի կրկնել աւանդութիւն դարձած այս ուխտագնացութիւնը:

Գլխաւորութեամբ Ս.Գ.Ն.Կ. Լիբանանի Շրջանի վարիչ մարմնին, Տիրուհի ակումբին մէջ կատարուեցաւ հոգեճաշ նուիրուած մեծ գաղափարախօս Սարգիս Տիրուհիի նահատակութեան 85-րդ տարելիցին:

**THE SYRIAN ARMENIAN RELIEF FUND**

PRESENTS A PUBLIC LECTURE

# “THE SYRIAN ARMENIAN CRISIS”

FEATURED LECTURERS

From Damascus **BISHOP ARMASH NALBANDIAN**  
Primate of the Armenian Church Diocese of Damascus

From Aleppo **DOCTOR KRIKOR ADANALIAN**

Կազմակերպութեամբ՝  
**ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ ՕՃԱՆԳԱԿՈՒԹԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՄԱՐՄԻՆԻ**

Դասախօսական Երեկոյ

## «ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱԴՂԸ ԵՒ ՄԵՆՔ»

Կը Յեկուցեն

Դամասկոսէն՝ **Գերաշնորհ Արմաշ Եպս. Նալպանտեան**  
Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ

Հայքայէն՝ **Բժիշկ Գրիգոր Ատանալեան**

Երկուշաբթի, Փետրուար 10, 2014 Երեկոյեան ժամը 7:00ին  
**Monday, February 10, 2014 at 7:00PM**

**Nazareth and Sima Kalaydjian Hall of the Western Diocese**  
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504